

Ապրիլյան պատերազմի հետքերով...

Ապրիլի երկուսից սկսած՝ Մարտակերտի շրջանի սահմանամերձ գյուղերի բնակիչների կյանքը բաժանվել է երկու մասի՝ մինչ երեկոյան ժամը 7-ը եւ երեկոյան ժամը 7-ից մինչեւ լույսի բացվելը:

Լույսի բացվելը՝ նշանակում է ինչ-որ վատ բանի ավարտ եւ մի բանի ժամով ապրելու հնարավորություն, սակայն դա ոչ այլ ինչ է, քան՝ փխրուն խաղաղություն...

Ռմբակոծվող գյուղն ու առանց բացականչելու դպրոցը...

Մարտակերտի շրջանի Ներքին Հռոաթաղ համայնքը ապրիլի 2-ից նույնպես ռմբակոծվում է: Մինչ ապրիլյան պատերազմը գյուղում ապրում էր 1027 բնակիչ, այսօր համայնքի 230 ընտանիքներից գյուղում մնացել է միայն 30-ը:

Համայնքում մնացած բնակիչները մուրթ ընկնելուն պես շտապում են գյուղի

սեր հասցվել նաեւ պարտեզին եւ խաղողայգուն:

«Տունը հնարավոր է նորից վերականգնել. եթե խաղողայգույն լինի՝ կաշխատենք եւ ի հեճուկս աղբբեջանցիների՝ ավելի մեծ տներ կկառուցենք: Միայն մարդկային կորուստն է անդառնալի: Ինչպես Արցախյան պատերազմից հետո ենք վերադարձել ու նորից գրոյից սկսել տուն հիմնել, նույնն էլ այսօր կանենք, մենք մեր բնակավայրում կմնանք, ուրիշ գնալու տեղ չունենք, սա է մեր երկիրը... Միայն թե ոչ մի գինվոր չզոհվի, գյուղում բոլորը ողջ եւ առողջ լինեն»,- ասում է Վ. Խաչատրյանը եւ շեշտում, որ մնալու են եւ սպասեն ու տեսնեն՝ այս ամենի վերջն ինչ է լինելու: 16-ամյա աղջիկն էլ ասում է, որ արկերի պայթյուններից ու ռմբակոծություններից չի վախենում, ու գյուղից ոչ մի տեղ չի գնալու:

«Շատ ենք զոհեր տվել, այս հողը մեր գինվորների արյամբ է շաղախված, թող պատերազմը լռի: Ուզում եմ, որ կյանքն ինչպես եղել է՝ իր հունով շարունակվի, ուրիշ ոչ մի բան մեզ պետք չէ»,- ասում է ուսուցչուհին:

1992 թվականին Կուսապատի, Ծաղկաշենի եւ Հռոաթաղի համայնքի ղեկավար Նազիկ Ենիկոյայանն այսօր ամուսնու եւ 7-ամյա որդու հետ ապրում է Ներքին Հռոաթաղում: Երեք համայնքների ղեկավարներն Արցախյան պատերազմի տարիներին գնացել են առաջնագիծ եւ գյուղերը նրան վստահել: Նա պատվով է կատարել իր վրա դրված պատասխանատվությունը: Նազիկն Արցախյան պատերազմում կորցրել է ամուսնուն:

«Վախենանք-չվախենանք՝ մեր տունն այստեղ է, մեր հողն այստեղ է, առաջնագծում մեր գինվորներն են, թիկունքումս էլ ամուսնուս գերեզմանն է. որտե՞ղ պիտի գնամ... Տեղ չատ կլինի գնալու՝ հարազատներ, բարեկամներ, բայց չեմ գնա»,- ասում է Ն. Ենիկոյայանը:

Առաջին արկը նրանց բախում է ընկել, սակայն, բարեբախտաբար, չի պայթել: Մեկ այլ արկի բեկոր էլ չարդել է նրանց պատուհանի ապակիները: Նազիկն այդ պահին պառկած է եղել. ապակիները թափվել են նրա վրա, եւ նա վնասվածքներ է ստացել:

«Չեմ հասկանում ինչո՞ւ ենք այսքան լռում, ինչո՞ւ արար աշխարհին չենք ներկայացնում, որ եթե թողնե՛ն՝ այստեղ ցեղասպանություն կլինի ազերիների ձեռքով: Հայ ազգը մեղք չի՞, որքան եղեռն է տեսել, որքան եղեռն է կանխել...»,- ասում է Ն. Ենիկոյայանը:

Նազիկի որդին՝ 7-ամյա Հովհաննեսն էլ, վառելով վառիչք եւ ցույց տալով կրակը, ասում է՝ լավ է, որ ռումբը չի պայթել, թե չէ մեկ րոպեում կրակի կվերածվեր տունը:


«Մայրիկիս վերքերն առողջացել են: Լավ է՝ ապակիներն էլ շատ հեռու չընկան, թե չէ մեր հեռուստացույցը կվնասվեր, իսկ առանց հեռուստացույցի ոնց կծանոթանայինք իրադարձություններին...»,- մանկամտորեն ասում է նա:

Փոքրիկ Հովհաննեսն ու Ներքին հռոաթաղում մնացած բնակիչները՝ մեծ, թե փոքր, ապրիլի երկուսից սկսած, առանց բացակայությունների ամեն օր գնում են դպրոց, սակայն մեկ ամիս է, ինչ դպրոցը ոչ թե գիտելիք ստանալու կառույց է, այլ ռմբակոծություններից փրկվելու ապաստարան...

650 բնակիչ ունեցող, այսօր դատարկ

Մատաղիսն ու փախստականների տուն վերադառնալու ցանկությունը...

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն



աղբբեջանական կողմը սկսեց հրետակոծել եւ ռմբակոծել սահմանամերձ Թալիշ համայնքը: Մատաղիսիցիները բավականին ուժգին կրակոցներ լսեցին եւ արթնացրին երեխաներին, որպեսզի անհրաժեշտության դեպքում շտապեն ապաստարաններ:

Առավոտյան ժամը 6:10 համազարկով խփեցին Մատաղիս խաղող բնակավայրի վրա, մի բանի արկ ընկավ սպայական շենքերի դիմաց: Պարզ դարձավ, որ նկուղն ապահով ապաստարան չէ բնակիչների համար: Գյուղացիները, ովքեր սեփական մեքենաներ ունեին, հարեւաններին էլ վերցնելով՝ շտապեցին հեռանալ գյուղից:

Մատաղիս համայնքի ղեկավար Չավեն



Անդրեասյանը առաջին արկի պայթյունից ապրիլի 2-ին վիրավորվեց, այդ պատճառով համայնքի Նախագահությունը ստանձնեց Մատաղիսի դպրոցի տնօրենը՝ Գեղամ Աղաջանյանը:

«Ամիջապես կապ հաստատեցինք Մարտակերտի վարչակազմի ղեկավարի հետ, ում հրահանգով մնացած բնակիչները մինչեւ բնակիչներին տարհանելու նպատակով մեքենաները կհասնեն գյուղ»,- ասում է Գ. Աղաջանյանը:

Տարհանված բնակչությունը հիմնականում կանայք եւ երեխաներ են, ովքեր ժամանակավոր ապաստանել են մայրաքաղաքի հյուրանոցներում: Բնակիչների մի

մասն էլ տեղափոխվել է մոտակա գյուղերը՝ ծանոթ, բարեկամների մոտ:

«Կառավարությունը հոգում է նրանց կեցության եւ սննդի հարցերը: Զաղաքի բնակիչները, ով ինչով կարողանում է, օգնում են՝ հանգուստով, անհրաժեշտ պարագաներով, նաեւ դրամական միջոցներով,- նշում է Գեղամը, ում ինը հոգանոց ընտանիքն ապաստանել է Ստեփանակերտի «Նահիրի» հյուրանոցում:

Սահմանամերձ գյուղերի երեխաները ժամանակավոր ընդունվել են Ստեփանակերտի մանկապարտեզներ եւ դպրոցներ:

Հարցիս, թե ինչո՞ւ է նա դեռ Մատաղիսում, Գեղամ Աղաջանյանը պատասխանում է. «Բա որտե՞ղ լինեմ, մեր հողն ա, մեր ջուրն ա, մեր տներն ու օջախներն են: Ես գնալու տեղ չունեմ, միայն թե ընտանիքս ապահով լինի. իսկ երբ ամեն ինչ խաղաղվի, նրանց էլ անպայման հետ կբերեմ»:

«Բոլորիս երագանքն առաջին հերթին խաղաղությունն է. մարդիկ վերադառնան իրենց տները, իրենց օջախները շենքնեն, գյուղացին իր գործով զբաղվի: Բայց պատերազմի դեպքում բոլորս մեկ մարդու նման պատրաստ ենք պաշտպանել մեր հողն ու ջուրը, մեր երեխաներին եւ մեր իրավունքները»,- շեշտում է Գ. Աղաջանյանը եւ ավելացնում, որ հաճախ է հեռախոսով խոսում փախստական բնակիչների հետ. բոլորն ուզում են շուտ վերադառնալ իրենց տուն...:

Ապրիլի 5-ի՝ «խաղաղության» պայմանավորվածությունից հետո թշնամին մի բանի անգամ խախտել է այն: Վերջին օրերի ընթացքում, պարտադիր կերպով գիշերները, գյուղը հրետակոծվում է: Գյուղի տարածք են ընկել տասնյակ արկեր: Մատաղիսում հրթիռակոծվել են բնակելի տների 80%-ը, հասարակական նշանակության շենքեր ու շինություններ: Թշնամին զգալի նյութական վնաս է հասցրել տեղա-

ցիներին: Վնասվել են գյուղացիների մեքենաները:

Պատերի եւ տանիքների վերականգնման ու այլ շինարարական աշխատանքների համար ԼՂՀ քաղաքաշինության նախարարությունը բավականաչափ շինանյութ է տրամադրել: Շինարարական աշխատանքներն սկսվել էին, երբ ապրիլի վերջին թշնամին նորից հրետակոծեց բնակավայրը: Այդ պատճառով համայնքում իրականացվելիք աշխատանքները հետաձգվեցին:

Գյուղն ունի 250 մշտական, 650 ժամանակավոր բնակիչ: Մատաղիսի դպրոցն ունի 105 աշակերտ:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ



ապաստարանը:

«Ժողովուրդը ցերեկները գնում է տուն, իր առօրյա կյանքը շարունակում, իրիկունները վերադառնում ապաստարան: Մինչեւ հիմա չենք պատկերացնում, թե ինչ է լինելու այս ամենի վերջը»,- ասում է համայնքապետ Արթուր Մնացականյանը:

Բնակչությանն ամբողջությամբ չեն տարհանել, սակայն բնակիչներն անորոշ վիճակում են, չգիտեն՝ ինչ անել: Գյուղը թողնել չեն ուզում, բայց մնալն էլ վտանգավոր է...

«Դուրս գալը հեշտ է, այլ հարց է, թե որտե՞ղ պետք է տեղավորվեն այդ ընտանիքները եւ ի՞նչ ապագա է սպասվում նրանց»,- մտահոգվում է Ա.Մնացականյանը:

63-ամյա Անգին Բալասանյանը, ում որդիներն ապրում են Ռուսաստանում եւ հորդորում ծնողներին տեղափոխվել իրենց մոտ, ասում է, որ գնալու տեղ չունի, իր հող ու ջրից ինչպե՞ս հեռանա: «Հողեմ Ալիեի գուրվիք, ինչ էլ անի՝ ես իմ տնից գնացողը չեմ, մեռնեմ էլ՝ իմ տանն եմ մեռնելու»,- ասում է Անգին տատը:

Ներքին հռոաթաղի, մասնագիտությամբ ուսուցչուհի Վարդիթեր Խաչատրյանն ասում է, որ աղբբեջանցիների համար արդեն սովորական երեւույթ է գիշերային ժամերին խաղաղ բնակավայրերի ռմբակոծումը, եւ արդեն ո՞րերորդ գիշերն է՝ նրանք անց են կացնում նկուղում:

Ապրիլի 28-ի գիշերը գյուղը հերթական անգամ ռմբակոծվել է: Վնասվել են ուսուցչուհու տան ապակիները եւ դռները, վնաս-

Չայ գինվորը խառնեց բոլոր «խաղաքարտերը»

Այն, ինչ տեղի ունեցավ օրերս, փաստում է մի բան՝ Ադրբեջանի հանցավոր ծրագրերը, որոնք նա իրականացրել է միջազգային խոշոր խաղաղոցների լուռ համաձայնության ներքո, կարողացավ կանգնեցնել միայն հայ գինվորը, որը չվախեցավ գերաարդիական զենքից և պաշտպանեց ու պաշտպանում է մեր սահմանների անառիկությունը: Եթե փոքր-ինչ վերլուծենք, ապա կտեսնենք, որ այս ամենը միայն մեկ նպատակ ուներ՝ կայծակնային հարվածի միջոցով զավթել Արցախի տարածքների զգալի մասը և այնուհետև հայկական կողմերին փաստի առաջ կանգնեցնելով՝ ստիպել տեղի տալ նաև դիվանագիտական հարթակներում:

Եվ դա կատարվեց խոշոր խաղաղոցների լուռ համաձայնության ներքո. դա է փաստում ՌԴ վարչապետ Ղազարովի Մեդվեդևի հարցազրույցը, երբ նա լրագրողի հարցին, թե ո՞վ է առաջինը սկսել եւ արդյո՞ք Ռուսաստանը տիեզերական արբանյակների միջոցով չի կարող դա փաստել, նա պատասխանեց, որ «մենք ամեն ինչ գիտենք ու հարցը դրանում չէ»: Թերեւս, հենց այդ է պատճառը, որ Սերժ Սարգսյանը ՌԴ ԱԳՆ նախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ հստակ հարցադրում արեց տեղի ունեցածի վերաբերյալ՝ մեղավորին նշելու համար: Ինչ վերաբերում է Լավրովի այցին, ապա բավականին ուշագրավ իրադարձություններ տեղի ունեցան նախքան Լավրովի այցը: Մի շարք ռուսական լրատվամիջոցներ սկսեցին խոսել նախկին ԼՂԻՄ-ի շուրջ գտնվող տարածքներն Ադրբեջանին հանձնելու վերաբերյալ Լավրովի պլանի մասին, իսկ Մ. Չախարովան հայտարարություն տարածեց, որ Լավրովը «ոչ մի տեղ դատարկածեմ չի գնում»: Մինչդեռ Երեւանում այլ

բան բացահայտվեց. նախ՝ Սերժ Սարգսյանը, երեւի ի գարմանս ռուսական կողմի, բավականին կոշտ հայտարարություններով հանդես եկավ ռուսական կողմի պահվածքի վերաբերյալ, այնուհետև Լավրովը խոսեց բանակցային գործընթացի՝ այսպես ասած արեւմտյան տարբերակի մասին, այսինքն՝ ԼՂԻՄ-Ադրբեջան սահմանին վերահսկողության մեխանիզմների և դիտորդների տեղակայման մասին, եւ, որ առավել ուշագրավ է, խոսեց ԵԱՀԿ գերմանական նախագահության մասին՝ նշելով, որ այն պետք է իր ուշադրության կենտրոնում պահի այդ հարցը / այս համատեքստում ամենեւին էլ պատահական չէր Ս.Սարգսյանի այցը Գերմանիա, որտեղ նա արժանացավ բարձրագույն ընդունելության /:

Այսպեսից հետո կարելի է փաստել մի բան՝ Չայաստանում մերժվեցին ռուսական կողմի առաջարկները, որն ավելի շատ հիշեցնում էր Ադրբեջանին սիրաշահելու փորձ եւ, այսպես ասած, Չայաստանի միջոցով Ադրբեջանին իր վերահսկողության տակ պահելու ռազմավարություն, ինչպես նաև Արցախի տարածքում ռուսական խաղապահ գործերի մտցման պատրվակի տակ իր ռազմական ներկայությունը ամրապնդելու փորձ: Եվ պատահական չէ, որ հայկական կողմերը էին կարող ընդունել այդ պլանը և նախապատվությունը տվեցին արեւմտյան պլանին՝ հետաքննության մեխանիզմների տեղակայման վերաբերյալ: Ի դեպ, այդ առաջարկը ներկայացրել էր Միացյալ Նահանգները, եւ որոշ տեղեկությունների համաձայն՝ հենց ԱՄՆ-ի միջուկային անվտանգության գազաթնամոնիթինգը, որին մասնակցում էին ԵՄ Սարգսյանը, ԵՄ Ալիեւը: Ու հենց այդ ժամանակ Ադրբեջանը սկսեց ռազմական գործողությունները:

Ինչ վերաբերում է ռուսական խաղաղապահների մտցմանը, ապա նախագահ Սարգսյանը ամերիկյան Bloomberg գործակալությանը տված հարցազրույցում հերքեց այն, ինչը նշանակում է, որ հայկական կողմը կտրականապես դեմ է ռուսական խաղաղապահներին, որը ենթադրում էր Արցախում ստեղծված ներկայիս անվտանգության համակարգի քայքայում:

Ինչ վերաբերում է ռուսական կողմի հետքայլին եւ դարաբաղյան հիմնահարցի հիմնական դերակատարությունն արեւմուտքին զիջելու պատրաստակամությանը՝ փաստում են հենց Լավրովի հատարությունները Երեւանում, մասնավորապես՝ ԵԱՀԿ-ի գերմանական նախագահության վերաբերյալ շեշտադրումը, այնուհետև՝ Ֆրանսիական բարձրաստիճան պաշտոնյայի տարածաշրջան կատարած այցը եւ հետաքննության մեխանիզմների վերաբերյալ կոկրետ առաջարկների ներկայացումը: Ռուսական կողմը դա արեց՝ հասկանալով հանդերձ Չայաստանում տիրող իրավիճակը:

Արցախյան երկրորդ պատերազմում ռուսական կողմի պահվածքը բավականին դժգոհություններ է առաջացրել հայկական հասարակության մեջ, որի արդյունքում մեծ հակառուսական տրամադրություններ են առաջացել Չայաստանում եւ Արցախում, մասնավորապես՝ ռուսական զենքի վաճառքի, Ռուսաստանի կրավորական կեցվածքի եւ այլնի վերաբերյալ: Եվ հենց սա էր պատճառը, որ ՌԴ-ն հրաժարվեց իր պլաներից՝ հայկական հողերի հաշվին Ադրբեջանին սիրաշահելու վերաբերյալ, քանի որ հասկացավ, որ Ադրբեջանի հետեւից վազելով՝ կարող է Չայաստանը կորցնել: Ու հենց հայ հասարակության միաբանությունն ու համախմբումը թույլ տվեցին ՀՀ նախագահին բա-

վականին կոշտ ու հստակ կերպով հարցեր բարձրացնել եւ հայ ժողովրդի շահերը պաշտպանելու հարցադրումներ առաջ քաշել: Սակայն ամենեւին էլ չպետք է մտածել, որ Ռուսաստանը տեղի է տվել եւ վերջնականապես հրաժարվել է արցախյան հարցում իր գլխավոր դերակատարությունից: Պատահական չէ, որ Ադրբեջանի ԱԳ նախարար Մամեդյարովը վերջերս հայտարարեց, որ ռուսական կողմի, մասնավորապես Կազանյան փաստաթղթում առաջարկների մեջ Ադրբեջանի համար հետաքրքիր առաջարկներ կան: Մամեդյարովը նաև խոսեց հայկական կողմի, այսպես ասած, նախապայմանների անընդունելիության մասին: Թե ինչ նախապայմաններ էին դրանք, հայտնի է: Դրանք Ս.Սարգսյանի կողմից առաջ քաշված, մասնավորապես ռազմական գործողությունների դադարեցման եւ ծանր զինտեխնիկայի ու դիպլոմատիայի հետ քաշման առաջարկներ էին, որոնք միանգամայն տեղավորվում են նաև հետքանուության մեխանիզմների կիռարման շրջանակներում: Արդյո՞ք դա չի փաստում, որ ներկա փուլում ՌԴ-ն ու Ադրբեջանը խաղում են միեւնույն խաղը: Եվ արդյո՞ք պատահական էր Լավրովի՝ Երեւանում մերժում ստանալուց եւ նրա երեւանյան այցից անմիջապես հետո Ադրբեջանական արկակոծման ակտիվացումը, նույն գիշերը ԱՄՆ պետքարտուղարի հեռախոսազանգը Սերժ Սարգսյանին: Հարցերը շատ են, սակայն մի բան պարզ է՝ բոլոր խաղաքարտերը խառնել են հենց հայ գինվորն ու սպան, ովքեր փայլուն կերպով կատարեցին ու կատարում են իրենց գործը: Մնում է, որ մեր դիվանագետները նույնպես հմտորեն կատարեն իրենց պարտականությունները:

Վ. Գ.

Ո՞ւմ պետք է ավելի շատ խղճալ՝ նախագահ Օբամային, թե՞ միամիտ հայերին



Պաշտոնավարման ութ տարիների ընթացքում ԱՄՆ նախագահ Օբաման չկատարեց իր նախընտրական խոստումը՝ Չայոց ցեղասպանությունը անվանելու ցեղասպանություն: Այդուհանդերձ, անհասկանալի պատճառով, որը կարող է ներկայացվել միայն որպես միամտություն, բազմաթիվ հայեր Միացյալ Նահանգներում եւ ամբողջ աշխարհում Օբամայի պաշտոնավարման առաջին տարվանից՝ 2009 թվականից ի վեր զուր հույսեր էին փայփայում, որ նա կօգտագործի Չայոց ցեղասպանություն եզրույթը 2010-ին, 2011-ին կամ 2012-ին: Երբ նախագահ Օբաման իր առաջին պաշտոնավարման ավարտին չարտասանեց այդ բառերը, այս միամիտ հայերը համոզված էին, որ նա կարտաբերի դրանք իր երկրորդ եւ վերջին պաշտոնավարման ժամանակ՝ սկսած 2013 թվականից: Նրանք սխալմամբ համարում էին՝ հավանականությունը ավելի մեծ է, որ Օբաման կսսի ցեղասպանություն, քանի որ նա այլեւս չի առաջադրվելու, ուստի քննադատության ենթարկվելու խնդիր չունի ոչ Թուրքիայի, ոչ իր ներքին քաղաքական ընդդիմախոս-

ների կողմից: Երբ նախագահ Օբաման շարունակում էր մերժել Չայոց ցեղասպանություն եզրույթի օգտագործումը, այս նույն միամիտ հայերը հորինեցին մի նոր պատճառ՝ շարունակելով ցանկալին իրականի փոխարեն ներկայացնել: Նրանք կարծում էին, որ եթե Օբաման համարձակվել է փոխել Կուբայի նկատմամբ ԱՄՆ-ի երկարատեւ սահմանափակող քաղաքականությունը, ապա նա կարող է Չայոց ցեղասպանության հարցում եւս հանդես գալ միեւնույն համարձակությամբ... Սակայն, ապացուցվեց, որ այս ենթադրությունը անհիմն էր: Վերջապես, երբ բոլոր սպասումները ձախողվեցին, միամիտ հայերն ակնկալում էին, որ Օբաման կարտասանի այդ երկու արգելված բառերը 2016 թվականի ապրիլի 24-ին՝ օգտագործելով իր վերջին հնարավորությունը: Այս կանխատեսումը եւս չիրականացավ: Նախագահ Օբաման իր վերջին հայտարարության մեջ օգտագործեց բառարանում անկազմ բոլոր հնարավոր մեղմասացությունները՝ նկարագրելու համար, թե ինչ է տեղի ունեցել հայ ժողովրդի հետ 1915-ին՝ բացառությամբ ցեղասպանություն բառի... Ահա նախագահ Օբամայի վերջին բանավոր վարժանքի արգասիքը՝ «զանգվածային վայրագություն, տեղահանություն, կոտորած, աքսոր, տառապանք, դժնդակ օրեր, ողբերգություն, բռնություն և սարսափ»: Ինչո՞ւ է աշխարհի ամենահզոր երկրի ղեկավարը չարչարում իրեն եւ իր օգնականներին՝ այսքան շատ բառեր գտնելու համար, երբ ընդամենը մի բառը՝ ցեղասպանություն, բավարար կլիներ: Անհավատալիորեն, որոշ հայեր անցել են միամտության բոլոր սահմանները՝ պնդելով, որ քանզի Օբաման ոգեկոչման իր ամենամյա ուղերձում օգտագործեց «Մեծ եղեռն» եզրույթը, ապա այն պետք է դի-

տարկել որպես իր նախընտրական խոստման կատարում եւ Չայոց ցեղասպանության ճանաչում: Խնդիրն այն է, որ Օբաման, որպես նախագահի թեկնածու, չէր խոստացել, որ ընտրվելու դեպքում կասի «Մեծ եղեռն»: Ընդհակառակը, նա խոստացել էր ասել Չայոց ցեղասպանություն եւ նույնիսկ պնդել՝ «Ամերիկյան արժանի է այնպիսի նախագահի, որը ճշմարտությունը կասի Չայոց ցեղասպանության մասին: Ես կլինեմ այդ նախագահը»: Բացի այդ, «Մեծ եղեռնը» իրավական եզրույթ չէ եւ անհավանալի է ոչ հայերի համար: Եթե «Մեծ եղեռնը» համարժեք է Չայոց ցեղասպանությանը, ապա ինչո՞ւ է Օբաման ութ տարի շարունակ օգտագործում միայն առաջին եզրը, այլ ոչ թե վերջինը: Եթե հայերը միամիտ են, ապա նույնը չի կարելի ասել Օբամայի եւ նրա օգնականների մասին, որոնք գիտեն, թե ինչ են ասում եւ ինչու... Այս անհեթեթ իրավիճակում կան երկու մեղավորներ: Առաջինը՝ նախագահ Օբաման է, որը խոստում է տվել եւ չի կատարել այն, այդպիսով խաբել իրեն հավատացած եւ իր օգտին երկու անգամ քվեարկած մարդկանց... Եթե Օբամայի համար միեւնույն է՝ ամերիկյան հասարակությանը թողնել ճշմարտություն չասելու ժառանգություն, ապա դա իր խնդիրն է եւ ոչ թե ամերիկահայ համայնքի... Երկրորդ մեղավորները նրանք են, ովքեր անխոհեմորեն տարեցտարի հույսեր են փայփայել, որ նախագահ Օբաման կօգտագործի Չայոց ցեղասպանություն բառերը, թեեւ նման հայտարարություն անելու անհրաժեշտություն չկար: Չայոց ցեղասպանությունը արդեն բազմիցս ճանաչվել է Միացյալ Նահանգների կողմից՝ 1951 թվականին ԱՄՆ կառավարության կողմից Արդարադատության միջազգային դատարան ներկայացրած պաշտոնական փաստաթղթում, 1975 եւ 1984 թվականներին Ներկայացուցիչների պալատի կողմից ընդունված երկու բանաձեւերում, եւ 1981 թ. ապրիլի 22-ին նախագահ Ռեյգանի ընդունած հռչակագրում: Ինչո՞ւ պետք է հայերը ձգտեն Չայոց ցեղասպանություն եզրույթին, երբ այն արդեն ասվել է նախորդ նախագահի կողմից: Արդյոք ԱՄՆ յուրաքանչյուր նախագահ պետք է օգտագործի այդ եզրույթը, որպեսզի հայերը համոզված լինեն, որ Չայոց ցեղասպանությունն իրոք ճանաչվել է Միացյալ Նահանգներում: Ցավոք, հայերի մեծամասնությունը ցեղասպանության ճանաչման հարցը շփոթում է Թուրքիայի հանդեպ ԱՄՆ կառավարության վարած քաղաքականության հետ: Չայոց ցեղասպանությունը ճանաչած համարվող երկրներից եւ ոչ մեկը Թուրքիայի հետ թշնամական հարաբերություններ չունի: Նման հարաբերություններ չունի նաև ԱՄՆ-ն... Այդ բոլոր երկրները ցեղասպանության ճանաչումը հավասարակշռել են Թուրքիայի հետ նորմալ եւ նույնիսկ ջերմ հարաբերությունների պահպանմամբ: Միացյալ Նահանգները չպետք է դիտարկել որպես Չայոց ցեղասպանությունը ճանաչած միայն այն պատճառով, որ նրա ղեկավարները խուսափում են օգտագործել ցեղասպանության եզրույթը իրենց քաղաքական կամ տնտեսական շահերի թուրքմբռնման պատճառով... Կարելի է դատապարտել ԱՄՆ քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ՝ առանց հարցականի տակ դնելու նրա կողմից Չայոց ցեղասպանության ճանաչումը: Իրականում, Չայոց ցեղասպանությունը ճանաչելու համար ԱՄՆ կառավարությանը մեղադրելը, ինչպես հաճախ անում են բազմաթիվ հայեր, կանխածի տակ է դնում Տեղասպանության եղելության փաստը եւ մեծ վնաս հասցնում Չայոց Դատին...

Հարութ ՍԱՄՈՆՅԱՆ

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման «հայրը» պատմել է, թե երբ կդադարեն կրակել

5 ← Նայեք փաստաթղթին: Ամբողջ տեքստը հավաքված է համակարգչով, իսկ «Հայաստանի պաշտպանության նախարար» բառերը գրված են իմ ձեռքով: Հայկական կողմից ստորագրել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, այն ժամանակ՝ պաշտպանության նախարարը: Նա նույնիսկ ուղղումներ մտցրեց: Այդ փոփոխությունների համաձայնեցումը մի ուրիշ վիճակում կտեւեր մոտ մեկ ամիս: Բայց այդ պահին հայերն Ադրբեջանին արդեն շատ ուժեղ ճնշել էին:

- Ադրբեջանը պարտություն էր կրում մարտադաշտում:

- Այն ժամանակ վտանգ կար, որ հայկական կողմը դուրս կգա Կուր գետի վրա, եւ հյուսիս-արեւմուտքը կկտրվի Ադրբեջանից: Կարող էին կրկնվել կես տարի առաջ տեղի ունեցած դեպքերը, երբ Հայաստանը դուրս եկավ Արաքս գետի ափ, Իրանի սահմանին եւ հարավ-արեւմուտքը կտրվեց Ադրբեջանից: Այդ ժամանակ զինվորականները եւ խաղաղ բնակչությունը փախչում էին Իրանի տարածքով: Եվ եթե երկրորդ անգամ էլ նման բան տեղի ունենար, Հեյդարն իր տեղում չէր մնա...:

Եվ դրա համար ադրբեջանցիներն այդ փոփոխություններին համաձայնեցին վայրկյանապես: Մայիսի 9-ին համաձայնագիրը ստորագրվեց Բաքվում՝ Ադրբեջանի պաշտպանության նախարար Մամեդրաֆ Մամեդովի կողմից, մայիսի 10-ին՝ Երեւանում՝ Սերժ Սարգսյանի կողմից, մայիսի 12-ին՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանի կողմից: Տեքստը ստիպված էինք 3 պատճենով հանել՝ երեք առանձին ստորագրությունների համար:

Բաքվից Մոսկվա վերադարձա «ադրբեջանական» օրինակով, մնացածն ինձ ուղարկեցին ֆաքսով: Այսպիսով՝ զինադադարի մասին համաձայնագիր դարձել է այս 3 փաստաթուղթը: Մայիսի 12-ին համաձայնագիրը ուժի մեջ է մտել:

Համաշխարհային փորձի մեջ այդպիսի օրինակ գոյություն չունի: Իրավաբանական օրենքներով՝ փաստաթուղթը պետք է ստորագրվի մեկ օրում եւ մեկ տեղ: Իսկ այստեղ 3 օր եւ 3 տարբեր ստորագրման վայրեր են: Բայց համաձայնագրի ստորագրման հետաձգելը վտանգավոր էր: Կողմերից ինչ-որ մեկը կարող էր հաջողության հասնել մարտադաշտում, եւ ամեն ինչ պետք էր սկսել սկզբից:

- Ստացվում է, որ Ղարաբաղում կրակի դադարեցումը եղավ ռուսական միջնորդությամբ. ինչպե՞ս են դրան վերաբերել արեւմտյան գործընկերները:

- Արեւմտյան գործընկերները շատ խանդոտ են դրան վերաբերել, որովհետեւ նրանք ունեին Անդրկովկասից Ռուսաստանին դուրս մղելու տրամադրվածություն: Երեւան կատարած իմ այցելություններից մեկի ժամանակ՝ 1994թ. հունիսին, ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանկարծակի ինձ ասաց, որ իրեն զանգահարել է Յան Ելիասոնը՝ շվեդ դիվանագետ, ով այդ ժամանակ Մինսկի խմբի համանախագահ էր: Շվեդը առաջարկել էր. «Երկարաձգել կրակի դադարեցումը 30 օրով»: Ես, լրիվ անգիտակցաբար, ասացի. «Լեւոն Հանկոբի, ինչպե՞ս թե երկարաձգել 30 օրով, չէ՞ որ մենք այն պայմանավորվել ենք անժամակետ»: Գոյություն ունի այսպիսի դիվանագիտական հնարք՝ «no ymoլчaн-սю», այսինքն՝ եթե ոչ մի ժամկետ նշված

չէ, ապա պայմանավորվածությունն անժամկետ է: Մինչ այդ կային 10-12 տարբեր պայմանավորվածություններ կրակի ժամանակավոր դադարեցման մասին, որտեղ ամեն տեղ ժամկետ էր նշված: Իսկ այստեղ հանկարծ մենք ունց որ մոռացել ենք ժամկետի մասին: Հատուկ ենք մոռացել, մտածված: Եւ Հեյդար Ալիեւը դրա հետ համաձայն էր: Բայց արեւմտյան գործընկերների մոտ միտում կար Ռուսաստանից վերցնելու դիվանագիտական այդ հաղթանակը եւ այն տալու Մինսկի խմբին, որում, իհարկե, ղեկավարում էին ամերիկացիները: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ինձ հետ համաձայնեց: Ես նրան անմիջապես արեցի հակադարձ առաջարկություն, որպեսզի վերջնականապես «թաղվի» այդ անմիտ գաղափարը. «Եկեք պայմանավորվենք, որ պարբերաբար երեք կողմերի՝ Ադրբեջանի, Հայաստանի եւ Ղարաբաղի երեւելի ներկայացուցիչները հաստատեն կրակի դադարեցումը ու պահպանեն իրենց պատասխանատվությունը՝ ընդհուպ ռազմական հակամարտության դադարեցման մասին մեծ պայմանավորվածության կնքում, իսկ կողմերի ներկայացուցիչները պարբերաբար պետք է այն սատարեն»: Հունիսի 26-ին այն ստորագրեց ադրբեջանական կողմը, իսկ մյուսները ստորագրեցին հաջորդ օրը: Այդ փաստաթղթի տեքստը ոչ մի անգամ չի հրապարակվել: Ես այն ձեզ եմ հանձնում: Փաստացիորեն, այն հակաթույն է Վաշինգթոնի փորձերին՝ շվեդների միջոցով Ռուսաստանից գողանալու կրակի դադարեցման որոշումը:

- Ինչո՞ւ այդ փաստաթուղթն առայսօր չի հրապարակվել:

- Որովհետեւ հայերն այդ փաստաթղթին շատ մեծ նշանակություն են տվել, առաջին անգամ հաջողվել է նույն Էջում Ադրբեջանի ստորագրության կողքին դնել Ղարաբաղի ներկայացուցչի ստորագրությունը:

- Ինչո՞ւ Ղարաբաղ չեն մտցվել խաղաղապահ ուժեր:

- Միանգամից հասկանալի էր, որ այդ պիտի լինեին ռուսական խաղաղապահները: Դա ընդհանրապես ձեռք չտվեց Արեւմուտքին, որովհետեւ դա կաշխատեր Ռուսաստանի հեղինակության օգտին: Հայերը խաղաղապահների տեղակայման հարցին համաձայն էին: Ադրբեջանցիները մերթ համաձայնում էին, մերթ՝ մերժում: Եւ ահա թե ինչի գնաց ԵԱՀԿ-ն, որպեսզի կանխի ռուս խաղաղապահների տեղակայումը: 1994թ. դեկտեմբերին Բուդապեշտում կայացավ ԵԱՀԿ վեհաժողովը: Դրա արդյունքում ընդունված փաստաթուղթում կա մի կետ, որում որոշում է հայտնում խաղաղապահ ուժերի տեղակայման մասին: Այսինքն՝ նախատեսվում է, որ դրանք պետք է լինեն ԵԱՀԿ-ի խաղաղապահները: Սակայն իրականում խաղաղապահների տեղակայման առումով այլ երկրներ պատրաստ չէին: Դա արված էր նրա համար, որպեսզի ռուս խաղաղապահների հարցը փակվի:

- Երբ ես եղա Ղարաբաղ, ինձ զարմացրեց այնտեղի իրավիճակը: Հակամարտ գործերը կանգնած են երես առ երես: Նրանց միջեւ ոչ միայն չկան խաղաղապահներ, այլև նրանց դիրքերը շատ մոտիկ են իրար: Շատ վտանգավոր իրավիճակ է:

- Այո, կողմերի դիրքերը մնում են

իրար չափազանց մոտիկ, ինչն ավելացնում է միջադեպերի հավանականությունը: Իսկ ի՞նչն է դրա պատճառը: Մինչեւ հրադադարը, 1994թ. փետրվարի 18-ին՝ Արբատում, Պաշտպանության նախարարությունում Պավել Գրաչեւը անց է կացրել խորհրդակցություն ՀՀ եւ Ադրբեջանի ՊՆ ներկայացուցիչների եւ Ղարաբաղի Չինված ուժերի ներկայացուցչի հետ: Ես եւս ներկա էի: Այդ նիստի արձանագրության մեջ գրված է, որ խաղաղության պահպանման համար կողմերը պետք է շփման գծից հեռացնեն զորքերը: Դա ստորագրել է նաեւ Ադրբեջանի պաշտպանության նախարար Մամեդովը: Անցնում է միառժամանակ եւ Մամեդովն ինձ ասում է. «Թող հայերը ետ քաշվեն, որովհետեւ նրանք են մտել մեր հողերը, իսկ մենք կմնանք նույն դիրքերում»: Եւ հրաժարվում է իր վրա դրված պարտականություններից: Չորքերի հեռացման հարցն այդպես էլ մնում է: Բայց չէ՞ որ հայերը մուտք են գործել նրանց հողերը, որովհետեւ նրանք ոչ մի կերպ չէին ուզում դադարեցնել պատերազմը: Եթե նրանք Անվտանգության խորհրդի 822-րդ որոշումից հետո դադարեցնեին ռազմական գործողությունները, ապա հայկական «շրջափակման» մեջ կմնային միայն Շուշին, Լաչինը եւ Զեյթաջարը: Իսկ հիմա 7 շրջաններ են:

Դրանից հետո եղավ ես մեկ համաձայնություն: Ադրբեջանը նույնիսկ հրաժարվեց, որ այն եղել է, չնայած այն մշակվել էր Հեյդար Ալիեւի ներկայությամբ: Դուք կարծում եք, թե այն ինչ-որ բան է պարտավորեցնում Իլիամին: Ոչ մի դեպքում: Դա կրակի դադարեցման ռեժիմի հաստատման մասին պայմանագիր է: Նրանում մանրամասն գրված է, թե ինչպես պետք է կողմերն իրենց դրսեւորեն, երբ ինչ-որ միջադեպ է կատարվում որեւէ կողմի մեղավորությամբ: 6 ժամ չպետք է միջադեպի մասին մամուլն իմանա: Այնտեղ միջոցների կիրառման մի ամբողջ համակարգ է նշված: Այնպես որ, բոլոր տեսակի պայմանավորվածություններից հրաժարվելը, ցավոք, Ադրբեջանի վատ սովորույթն է:

- Երեւի ինչ-որ մեկը կարող է ձեզ մեղադրել հայամեն դիրքորոշման համար:

- Մի համարեք, որ ես Ադրբեջանի թշնամին եմ: Ես շատ սուր տարածայնություններ ունեի նաեւ հայերի հետ: Մի անգամ նույնիսկ հրաձգություն տեղի ունեցավ: 1993-ի նոյեմբերին ես տանում էի համաձայնագրի նորագրված տարբերակը: Սկզբում պիտի լինեի Բաքվում, հետո Երեւանում եւ Ստեփանակերտում: Ժամանակից Բաքու, մտածում էի, որ կվարտեն գործերս երկու օրում: Բայց ինձ խնդրեցին մի քիչ էլ մնալ, որի արդյունքում ես մի շաբաթ մնացի Բաքվում: Ժամանակացույցը փոխվեց: Իսկ Բաքվից ուղիղ թռչել Երեւան չէր կարելի: Պետք էր վերադառնալ Մոսկվա եւ միայն այնտեղից ուղեւորվել Երեւան: Եվ այդ ժամանակ, որպեսզի ժամանակ խնայեմ, ես Հեյդար Ալիեւին առաջարկեցի Երեւան գնալ «զորքերի շփման գծի երկայնքով»: Ինձ մեքենա տրամադրեցին, բայց մինչեւ տեղ հասանք, արդեն մուլթն ընկել էր: Ադրբեջանցիները հրաժարվեցին ինձ տեղափոխելուց, եւ ստիպված էի այդտեղ գիշերել: Առավոտյան ադրբեջանցիներն ասեցին, որ շփման գիծը ուրիշ կողմից պետք է անցնել: Իսկ բջջայիներ այն ժամանակ չկային, չէի կարողանում կապվել Երեւանի հետ, գտնվում էի ամ-

բողջովին ադրբեջանական կողմի հսկողության տակ: Պարզվեց՝ այդտեղ բախումները շարունակվում էին եւ կային ավերված ադրբեջանական գյուղեր: Նրանք չէին ուզում, որ ես դա տեսնեմ, եւ այդ պատճառով դեմ էին այդ մասով իմ անցնելուն: Այնուամենայնիվ, մենք շարժվեցինք: Կանգնեցինք. գումարտակի ադրբեջանցի հրամանատարն ասաց, որ ավտոմեքենա կուղարկի հայերի հետ պայմանավորվելու համար: Կանգնած էինք, եւ հանկարծ սկսեցին կրակել: Սկզբից ավտոմատի կրակահերթ էր, հետո՝ ականանետեր: Ավտոմեքենան հայերը խոցեցին: Մենք բլրի հետեւում էինք, չէինք վնասվել, բայց այդպես էլ չկարողացանք անցնել: Այդ ժամանակ մեծ աղմուկ բարձրացավ, արտաքին գործերի նախարար Անդրեյ Կոզիրեւը մամուլի ասուլիս կազմակերպեց:

- Որո՞նք են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները:

- Շատերն այն կարծիքի են, որ Լեւոնային Ղարաբաղի ճակատագիրը պիտի որոշեն հենց Ղարաբաղցիները: Եթե հանրաքվե անցկացվի, ապա դրա արդյունքներն ակնհայտ են: Նույնիսկ, եթե ենթադրենք, որ այդ հանրաքվեին կմասնակցեն նաեւ այն ադրբեջանցիները, ովքեր մի ժամանակ ապրում էին Ղարաբաղում, չնայած, որ նրանք վաղուց այլ վայրերում են բնակություն հաստատել, միեւնույն է՝ ճշտող մեծամասնությունը կքվեարկի անկախության համար: Դրա համար Իլիամ Ալիեւն ընդհանրապես հանրաքվե անցկացնել չի ուզում: Նա հարցը դնում է այսպես՝ «դա մեր տարածքներն են, վերադարձրեք այն մեզ»: Ավելին, դեռ Հեյդար Ալիեւի ժամանակներից 1995-ին նոր սահմանադրություն է ընդունվել, որտեղ ամրագրված է, որ հանրաքվեներ անց են կացվում միայն համազգային մակարդակով: Այդ պատճառով, ըստ Ադրբեջանի սահմանադրության՝ Ղարաբաղում չեն կարող հանրաքվե անցկացնել: Իսկ ինչքանով է դա համապատասխանում միջազգային փորձին: Քվեբեկի անկախության համար ձայն է տվել միայն Քվեբեկը, ոչ թե ամբողջ Կանադան: Շոտլանդիայի անկախության հանրաքվեի ժամանակ ձայն են տվել միայն շոտլանդացիները, ոչ թե ամբողջ Բրիտանիան: Եթե Կատալոնիայում տեղի ունենար անկախության հանրաքվե, ապա կքվեարկեին միայն կատալոնացիները, այլ ոչ թե ամբողջ Իսպանիան: Բայց Իսպանիան, ինչպես եւ Ադրբեջանը, չի ուզում այդ հանրաքվե, որովհետեւ արդյունքները պարզ են: Հենց դրա մեջ էլ թաքնված է հակամարտության խնդիրը:

Հակամարտության նոր սրում:

Հայոց Մեծ եղեռնի հիշատակի նախօրեին, որն ամբողջ աշխարհի հայերը նշում են ապրիլի 24-ին, հակամարտության գոտում իրավիճակը կտրուկ փոխվել է: Բաքվի վարկածով՝ ապրիլի 23-24-ն ընկած ժամանակահատվածում հայերը տանկերով նախահարձակ գործողությունների են դիմել, ոչնչացվել է մեկ հայկական տանկ: Իր հերթին՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտնում է ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերի ուղղությամբ Ադրբեջանի կողմից իրականացվող ինտենսիվ կրակահերթի մասին:

Թարգմանությունը՝ «Ապառաժ»-ի խմբագրության

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման «հայրը» պատմել է, թե երբ կդադարեն կրակել



«Ապառաժ»-ը ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ Վլադիմիր Կազիմիրովի՝ «московскую комсомолку»-ին տված հարցազրույցի թարգմանությունը... Համաձայն չլինելով նրա կողմից օգտագործվող «գրավալ», «բռնազավթված» տարածքներ եւ նման այլ եզրույթների օգտագործմանը, համեմատելով, հրապարակում ենք հարցազրույցի թարգմանությունն ամբողջությամբ՝ հաշվի առնելով, որ այն իր մեջ պարունակում է մի շարք պատմական փաստեր...

2016 թվականի ապրիլին, խաղաղությունից 22 տարի անց վերսկսվեց Ղարաբաղյան սահմանադրական հակամարտությունը: Ինչո՞ւ «այսօր» Ղարաբաղը: Ինչպե՞ս հաջողվեց 22 տարի անց կանգնեցնել հայերի եւ ադրբեջանցիների միջեւ արյունալի պատերազմը: Ինչո՞ւ Ղարաբաղ չեն մտցվել խաղաղապահ ուժեր: Այս ամենի մասին «московскую комсомолку»-ը գրուցել է իրադարձությունների անմիջական մասնակցի եւ խաղաղ համաձայնագրի հեղինակի հետ: Ռուս դիվանագետ Վլադիմիր Կազիմիրովը 1992-1996 թվականներին եղել է Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավարը, Լեռնային Ղարաբաղի հարցով Ռուսաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչը եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանը ներկայացնող համանախագահը:

- Վլադիմիր Նիկոլայի, դուք հանդիսանում եք Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման առաջնային մասնակիցը: Ավելին, դուք եք 1994 թվականի զինադադարի պայմանագրի հեղինակը, որը վերջ տվեց պատերազմին: Մինչեւ այս տարվա ապրիլ ամիսը այդ պայմանագրի շնորհիվ Ղարաբաղում հարաբերական խաղաղություն էր: Ինչո՞ւ այդ խաղաղությունը խախտվեց:

- Կասկած չկա, թե ով էր վերջին իրադարձությունների նախաձեռնողը: Ի դեպ, Ադրբեջանի դեսպանը Ռուսաստանում, ըստ ինձ, չափից ավելի ջանք թափեց, որի արդյունքում դավաճանեց Բաքվի իր ղեկավարությանը: Նա բացահայտորեն հայտարարել է, որ Ադրբեջանն իրավունք ունի ռազմական ուժով պայքարելու այդ տարածքների համար: Կարծում եմ, որ ստորագրված փաստաթղթերը բավական են նրա համար, որ շարունակվի պահպանվել իրադարձի ռեժիմը: Զկա նոր փաստաթղթեր ստորագրելու անհրաժեշտություն՝ չնայած ումանց մոտ կարող է «նման քոր առաջանալ»:

Մեկ այլ բան է, որ ոչ բոլորն են պատրաստ լրջորեն իրականացնելու այդ պայմանավորվածությունները: Յեղար Ալիևը մի անգամ հաստատական նշեց, որ անհրաժեշտ է լուծել հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով: Նրա հետևորդը դժվարությամբ է արտասանում «ցանկալի է խաղաղ ճանապարհով» բառակապակցությունը: Թե ինչպես է գործում՝ դուք ինքներդ տեսաք ապրիլի 2-ին: Իլիամը այսօր առավել շատ կենտրոնացնում է ուշադրությունը նրա վրա, որ անհրաժեշտ է վերացնել Ղարաբաղի շուրջ ադրբեջանական շրջանների բռնազավթումը: Իսկ այնտեղ 7 շրջան կա, 5-ը՝ ամբողջությամբ, իսկ 2-ը՝ մասամբ բռնազավթած: Իսկ այդ շրջափակումն առաջացել է այն պատճառով, որ Ադրբեջանը ոչ մի կերպ չէր ցանկանում դադարեցնել ռազմական գործողությունները՝ հուսալով, որ մի քիչ էլ, եւ նա կճնշի հայերին: Արդյունքում ստացվեց հակառակ պատկերը՝ նրանք կորցրեցին շրջան շրջանի հետեւից:

- Ինչո՞ւ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ընդունած 4 բանաձեւերը չկարողացան կանգնեցնել պատերազմը:

- Դրանք բոլորն անհաջողության մատնվեցին եւ չկատարվեցին: Ու՞մ կողմից չկատարվեցին: Ադրբեջանի: 1993 թվականի գարնանը հայերը գրավեցին Քելբաջարը: Այդ գործողության հաջողությունը հայերին ապահովեց Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ եւս մեկ կամուրջ՝ ի լրումն Լաչինի միջանցքի: Դրանից հետո Ադրբեջանը նախաձեռնություն ցուցաբերեց, որպեսզի հարցը քննարկի Անվտանգության խորհուրդը:

Անվտանգության խորհուրդը 1993 թվականի ապրիլի 30-ին ընդունեց Լեռնային Ղարաբաղի մասին 822 բանաձեւը: Բաքուն հույս ուներ, որ բանաձեւը իր մեջ կներառի հայերից ադրբեջանական հողերի ազատման պահանջ: Բայց ադրբեջանական կողմը չէր նախատեսել, որ այդ բանաձեւի առանցքային պահանջը կլինի անհապաղ կրակի եւ ռազմական գործողությունների դադարեցումը եւ նույնիսկ՝ «թշնամական գործողությունները»: Իսկ ի՞նչ է նշանակում «թշնամական գործողություններ»: հայկական տարածքների էներգետիկ, տնտեսական, տրանսպորտային շրջափակում: Ահա դա Բաքվի համար անակնկալ էր: Ահա ինչն էր կարեւորը ընդունված բոլոր բանաձեւերում. առանցքային պահանջը կրակի դադարեցումն էր: Բայց Ադրբեջանը դեռ պատրաստների մեջ էր, որ նրան կհաջողվի հաղթահարել հայկական ուժը: Նրա ներուժը, իհարկե, ավելի տպավորիչ է քան Հայաստանի ներուժը՝ ե՛ւ տարածքային, ե՛ւ բնակչության թվով, ե՛ւ սպառազինությամբ, որովհետեւ Խորհրդային Միության փլուզումից հետո Ադրբեջանին բաժին է հասել ավելի շատ ռազմական ունեցվածք, քան Հայաստանին: Օրինակ՝ Ադրբեջանի պահեստները, որոնք Խորհրդային Միության Անդրկովկասի պահեստներն էին: Ադրբեջանում կարի ավելի քան 16 օդանավակայան, Հայաստանում՝ ընդամենը 2-3: Սակայն միայն ներուժը բավական չէ հաղթելու համար: 822 բանաձեւի ընդունումից հետո եւ «խփեցի» ամերիկացիներին, նույնիսկ թուրքերին: Եվ մենք երեքով՝ Ռուսաստան, ԱՄՆ եւ Թուրքիա, այս հարցով գրավոր ձեռով դիմեցինք հակամարտության 3 կողմերին՝ պատրաստ եք 822

բանաձեւի լիարժեք իրականացմանը: Երեւանը եւ Ստեփանակերտը տվեցին իրենց համաձայնությունը: Ադրբեջանը գերադասեց ընդհանրապես պատասխան չտալ, որովհետեւ նա, այնուամենայնիվ, հույս ուներ հաղթելու: Դրա համար պատերազմը չի վերջացել: Փաստորեն, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Ղարաբաղի վերաբերյալ բոլոր 4 բանաձեւերն արժեզրկվեցին: Անվտանգության խորհուրդը չցանկացավ ընդունել հիվանդորդ բանաձեւը, քանի որ այն կարծեգրվեց իր հեղինակությունը: Նա ընդունում է բանաձեւեր, իսկ դրանք չեն իրականացվում: Այդ պատճառով, երբ մենք աշխատում էինք իրադարձարի համաձայնագրի շուրջ, մենք չկարողացանք աշխատել Անվտանգության խորհրդի ընդունած բանաձեւերի հիման վրա: Մենք ստիպված էինք ուրիշ հիմնավորում ընդունել մեզ համար:

- Ի՞նչը հանդիսացավ այդ հիմքը:

- 1994 թվականի մարտին Մոսկվայում իրար հետեւից կայացան ԱՊՅ երկրների խորհուրդի պետությունների ղեկավարների խորհրդաժողովներ: Առաջինի ժամանակ եւ նախապես խորհրդատվություններ անցկացրի, երկրորդի ժամանակ՝ ապրիլի 15-ին, եւ պատրաստեցի խորհրդի անդամ երկրների ղեկավարների հայտարարության տեքստը, որում կտրականապես հայտարարվում էր ռազմական գործողություններին վերջ տալու անհրաժեշտության մասին: Իսկ մենք ունեցանք հենման կետ՝ փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր էր աշխատել:

- Ի՞նչ դեր խաղաց Բիշքեկի գագաթնաժողովը:

- Մայիսի 5-ին մենք Բիշքեկ էինք իրավիճակը ԱՊՅ երկրների խորհրդարանների ղեկավարներին: Նրանք ստորագրեցին ռազմական գործողությունները դադարեցնելու Բիշքեկյան արձանագրությունը: Ես ցանկացա, որպեսզի զինադադար կնքվի Հաղթանակի օրը, սակայն, չստացվեց: Յեղարը այդ օրը Բյուրսեյ մեկնեց՝ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին անդամակցելու համար: Երկրի պատասխանատվությունը ստանձնեց պառլամենտի խոսնակ Ռասուլ Գուլիբեյ: Դրա համար Բիշքեկ ժամանեց փոխխոսնակ Ջալիլովը: Այնտեղ նա ամեն կերպ փորձում էր հավասարության նշան դնել Ղարաբաղի ադրբեջանական համայնքի եւ Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքների միջեւ, սակայն հայերը կռվում էին Բաքվի, այլ ոչ թե ադրբեջանական համայնքի հետ, որը Ղարաբաղում արդեն գոյություն չուներ: Դա երկարացնում էր մեր ժամկետները: Ստիպված էի մայիսի 9-ին մեկնել Բաքու, ուր նրանք վերջապես ստորագրեցին Բիշքեկյան արձանագրությունները: Բիշքեկում Ջալիլովը իրաժարվեց ստորագրել դրանք:

- Ի՞նչ նոր հիմնարար բան կար այդ փաստաթղթերում:

- Մենք ներկայացրել էինք նոր պահանջ, որը չկար Անվտանգության խորհրդի բանաձեւերում: Մենք պահանջել էինք ոչ միայն զինադադարի ամրագրում, այլև դրա պատշաճ կերպով ապահովում: Այնտեղ կա մի արտահայտություն «Առանց դրա (այսինքն՝ իրադարձարի պատշաճ ապահովման) հնարավոր չէր ողբերգական դիմակայության հետեւանքների վերացումը: Ի՞նչ է դա նշանակում: Գրավալ տարածքների ազատագրումը կլինի միայն այն ժամանակ,

երբ զինադադարի կնքման հուսալի ապահովում լինի: Այժմ դրա վրա է հենված Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ամբողջ խնդիրը: Բաքուն հարցն այսպես է դնում. «Ինձ վերադարձրեք գրավալ տարածքները՝ առանց որեւէ նախապայմանների»: Առանց նախապայմանների՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի եւ ռազմական գործողությունների վերսկսման շուրջ: Իսկ թե՛ հայկական, թե՛ մեր կողմից հարցը դրված է այսպես՝ նախ պետք է ապահովվի հուսալի զինադադար, բացառվի ռազմական գործողությունների վերսկսումը, որից հետո հայերի համար ամոթ կլինի պահել գրավալ տարածքները:

- Պատմեցեք, թե կոնկրետ ինչպե՞ս էր տեղի ունենում կրակի դադարեցման մասին համաձայնագրի ստեղծումը:

- 1994թ. մայիսի 9-ին ես գտվում էի Բաքվում եւ համաձայնագրի տեքստ էի պատրաստում: Խնդիրը կայանում էր նրանում, որ Յեղար Ալիևը ոչ մի կերպ չէր համաձայնվում ստորագրել Լեռնային Ղարաբաղի հետ կրակի դադարեցման մասին փաստաթուղթը: Նա ուզում էր պայմանագիր կնքել Երեւանի հետ, քանի որ Հայաստանը ճանաչված պետություն էր: Նա չէր ուզում Ղարաբաղը ճանաչել որպես բանակցային կողմի անդամ:

Մյուս կողմից՝ Հայաստանը ամեն կերպ խուսափում էր այդ պայմանագիրը ստորագրելուց: Հայաստանը ձեռնարկում էր, որ նա չի հանդիսանում հակամարտության կողմ եւ միայն օգնում է Լեռնային Ղարաբաղին, բայց պատերազմը Հայաստանի հետ չի ընթանում: Դա կեղծ դիրքորոշում է: Այս հակամարտության կոնֆլիկտուալացիան այն է, որ հակամարտությանը մասնակցում են երեք կողմ: Ռազմական առումով՝ Ղարաբաղի հայերը եւ Հայաստանի հայերը կռվում էին միասին: Իսկ քաղաքական առումով՝ Երեւանի եւ Ստեփանակերտի միջեւ գոյություն ունեին շատ տարածայնություններ եւ հակասություններ: Դրա համար պետք էր հասկանալ, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության ինքնուրույն կողմ է հանդիսանում: Եվ դա, բնականաբար, դուր չէր գալիս Ադրբեջանին, քանի որ Ղարաբաղը նրա նախկին ինքնավար շրջանն էր հանդիսանում:

- Բայց չէ՞ որ նախկինում Բաքուն արդեն համաձայնագիր էր կնքել Ղարաբաղի հետ:

- Այո, արդեն գոյություն ունեին տասնյակ փաստաթղթեր, որոնք ստորագրվել էին Բաքվի եւ Ստեփանակերտի միջեւ՝ առանց Երեւանի մասնակցության: Իսկ Երեւանի հետ նրանք կնքել են միայն 3 փաստաթուղթ: Այսինքն, երբ արդեն էլ չկար, Ադրբեջանը ստիպված էր ժամանակավոր խաղաղության պայմանագիր կնքել անմիջապես Լեռնային Ղարաբաղի հետ: Բայց այն պահին, երբ գործը գնում էր լիարժեք զինադադարի, Յեղար Ալիևը ոչ մի կերպ չէր ուզում ստորագրել այդ համաձայնագիրը: Նա խնդրեց ինձ, որ ես նորից կապ հաստատեմ Երեւանի հետ: Ես զանգեցի Երեւան՝ ոչ միայն նրա խնդրանքով, այլ նաեւ այն պատճառով, որ դա համապատասխանում էր մեր այն հասկացողությանը, որ երեք կողմերն էլ պիտի ստորագրեն այդ համաձայնագիրը: Եվ հանկարծ մի քանի ժամ անց պատասխան գանգ է գալիս Երեւանից, եւ տալիս են համաձայնություն՝ փաստաթուղթը ստորագրելու համար: → 6

Մադրիդյան սկզբունքներն անընդունելի են. ԼՂՀ ԱԺ պատգամավորներ

Արցախում, պատերազմական գործողությունների վերսկսմանը զուգահեռ, ակտիվացել են խոսակցությունները դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացված «Մադրիդյան սկզբունքներ» անվանումը ստացած փաստաթղթի մասին: Այն պաշտոնապես կողմերին է ներկայացվել 2007 թվականին, դրան հաջորդող տարիներին ենթարկվել է որոշակի փոփոխությունների և համարվում է բանակցային գործընթացում առկա վերջին պաշտոնական փաստաթուղթը: Փաստաթուղթը պարունակում է մի շարք փոխզիջումային դրույթներ, մասնավորապես՝ տարածքային փոխզիջումների, որոնց պետք է գնա հայկական կողմը:

Հասարակության մեջ տարածված մտահոգիչ տարածքային զիջումների մասին «Ապառաժ»-ը գրուցել է ԼՂՀ ԱԺ խմբակցությունների ղեկավարների հետ:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, անդրադառնալով Մադրիդյան սկզբունքներին, ասել է, որ դրանք չեն բխում ազգային, պետական շահերից:

«Անհրաժեշտ է այդ սկզբունքները կազմաքանդել և նոր սկզբունքներ մշտել բերել, և դրանց շուրջ բանակցություններ փորձել սկսել՝ հաշվի առնելով չորսօրյա պատերազմը: Այն, որ փոխզիջում հասկացությունը մեր պատկերացումներից դուրս է՝ որպես հողային զիջում, դա միանշանակ է», - ասել է նա և նշել, որ անհրաժեշտ է բանակցությունները նոր հիմքերի վրա դնել:

«Ես կարծում եմ, որ անհրաժեշտություն է, որպեսզի բանակցային գործընթացի վերսկսման պարագայում զրոյական փուլից եւ զրոյական մակարդակից սկսել»:

Ինչ վերաբերում է բանակցություններին ԼՂ-ի անմիջական ներգրավմանը, ապա Դավիթ Իշխանյանն ասաց. «Արցախյան կողմը հստակ արտահայտել և արտահայտում է բանակցային գործընթացի իր ներգրավման անհրաժեշտության մասին, մասնավոր՝ նկատի առնելով, որ ԼՂ հիմնահարցի վերաբերյալ որեւէ որոշում կամ եզրահանգում առանց արցախյան կողմի համաձայնության՝ անհնարին է: Ստեղծված նոր իրավիճակում անհրաժեշտություն է՝ արցախյան կողմն ուղղակիորեն ներգրավել բանակցային գործընթացին», - շեշտել է նա և հավելել, որ այդ ուղղությամբ հայկական դիվանագիտությունը ջանքեր է գործադրում:

Դավիթ Իշխանյանը ավելացրել է նաև, որ ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ մեր ժողովրդի անվտանգության հիմնահարցերը լիովին լուծված չեն, մասնավորապես՝ Արցախի հյուսիսային շրջանում և կենտրոնական հատվածներում. «Մարտակերտի շրջանի հյուսիսային հատվածը և Մարտունի շրջկենտրոնը դեռևս ամբողջական անվտանգության բաղադրիչներով չեն ապահովված, և կարելու է գիտակցել, որ այդ տարածքներն անխոցելի դարձնելու համար մեզ անհրաժեշտ է ժողովրդի անվտանգությունն ապահովող և երաշխավորող ավելի ընդլայնված տարածք ունենալ: Կարծում եմ՝ այս ուղղությամբ ոչ միայն պետք է մտածել, այլև՝ կոնկրետ

քայլեր ձեռնարկել»:

ԼՂՀ ԱԺ «Հայրենիք» խմբակցության ղեկավար Արթուր Թովմասյանը, խոսելով «Մադրիդյան սկզբունքների» մասին, գլխավորապես նշել է.

«Եթե հետեւենք ամբողջ բանակցային գործընթացի պատմությանը, Քիվետտում ձեռք բերված պայմանավորվածություններից մինչև Փարիզյան, Մադրիդյան և Կազանյան սկզբունքներ, պիտի նշել, որ ոչ մի փաստաթուղթ չէր ներկայացնում Արցախի ժողովրդի շահերը: Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ «Ազատ Հայրենիք» կուսակցության կարծիքը հետեւյալն է՝ այնտեղ ընդունելի են միայն երկու կետ. այն է՝ ԼՂ հիմնահարցի կարգավորումը պետք է տարվի միայն խաղաղ ճանապարհով, տարածքային ամբողջականությունը եւ ազգերի ինքնորոշումը գտնվում են միեւնոյն հարթու-



թյան վրա: Մենք միշտ էլ ասել ենք, որ ցանկացած հիմնարար փաստաթղթի հիմքում պետք է դրված լինի առաջին հերթին ԼՂՀ կարգավիճակի հարցը»:

Պատգամավորը կարծիք է հայտնել, որ ԼՂ հիմնահարցի լուծումը հնարավոր է միայն փոխվստահության մթնոլորտում: Այսօր, ըստ նրա, ՀՀ, ԼՂՀ և Ադրբեյջանի նախագահների միջև նման մթնոլորտ չկա: Այդ մթնոլորտը չկա նաև հայ և ադրբեյջանական ժողովուրդների միջև:

ԼՂՀ «Հայրենիք» խմբակցության ղեկավար Արթուր Թովմասյանի խոսքով՝ 2016 թվականի ապրիլի 1-ի լույս գիշերվա եւ դրա հաջորդող օրերի իրադարձությունները նոր իրավիճակ ստեղծեցին, և այսօր բանակցային գործընթացը վտանգված է:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին հսկայական աշխատանք է սպասվում հակամարտող կողմերին նորից բանակցության սեղան վերադարձնելու համար, իսկ Արցախը պետք է վերադառնա բանակցությունների սեղան:

«Այսօր փոխզիջումների մասին խոսելը դավաճանություն է, այսօր Արցախում «Մահ կամ ազատություն» գաղափարն է առաջնային, և վստահ եմ, որ ազատությունը կհաղթի մեր պարագայում», - եզրափակել է Թովմասյանը:

ԼՂՀ ԱԺ «Ժողովրդավարություն» խմբակցության ղեկավար Վարդգես Բաղդյանն էլ նշել է.

«Խնդիրն այն է, որ չգիտեմ ով է տեսել այս սկզբունքները: Ես անձամբ դրանք չեմ տեսել, կարող ենք դատողություններ

եւ ենթադրություններ անել միայն նրանից, ինչ կա իրապարակումներում, կայքերում կամ թերթերում, դրա համար դժվար է տեսակետ արտահայտել: Բայց որքանով ես եմ հասկանում, այնտեղ կան դրույթներ, որոնք միանշանակ անընդունելի են մեզ համար. խոսքս հատկապես տարածքներ զիջելու մասին է, ոչ ողջամիտ զիջումների և խաղաղապահ ուժեր տեղակայելու մասին է: Որքան ես եմ հասկանում՝ Ադրբեյջանը մեր կարգավիճակի մասին խոսել չի ուզում: Սա, իմ պատկերացմամբ, նշանակում է՝ այդ տարիների թափած արյունը չուրը գցել, որն անընդունելի է: Հատկապես հիմա շրջանառության մեջ են ուզում դնել Կազանյան փաստաթղթերը, ամեն մեկը տարածաշրջանում իր շահն է փնտրում, սակայն այստեղ վճռվում է մեր ճակատագիրը, լինել-չլինելու հարցը, այնպես

պետք է ձեռնարկել՝ հետեւություններ անելով: Անհրաժեշտ է մեր զինվորի խոցելիության մակարդակը իջեցնել, արդիական գեներալները ձեռք բերել: Մեր պետական, հանրային, հասարակական սեկտորի բոլոր ուժերը պետք է ուղղել այս հարցի լուծմանը: Ինչ վերաբերում է մեր կողմից փոխզիջումներին, ապա կարելի է գնալ նման փոխզիջման, այն է՝ չհասնել մինչև Քուռ գետը: 1994 թվականին Քուռի ափերին հասնելուց մի քանի ժամ առաջ հայր Ալիեյը զինադադար խնդրեց: Տղան էլ երեւի որոշել է հոր ճանապարհով գնալ»:

ԼՂՀ ԱԺ «Վերածնունդ» խմբակցության ղեկավար Հայկ Խանումյանը համոզված է, որ որեւէ զիջում չի բերի հարցի լուծման.

«Միանշանակ մեկ բան պետք է հասկանալ. նույնիսկ այն մարդիկ, որոնք մտածում են, որ ինչ-որ տարածքային զիջումներով կարող են հասնել հարցի վերջնական լուծման, ապա այդ մարդիկ ուղղակի մոլորված են: Խնդիրն այն է, որ ամեն սանտիմետր հողի զիջում ավելի խոցելի կդարձնի Արցախը: Ընդամենը երկու ուղղությամբ դիրքեր ենք կորցրել և արդեն ունենք լուրջ խնդիրներ որոշ տարածքների ֆիզիկական անվտանգությունն ապահովելու առումով, հետեւաբար՝ ամեն նոր տարածքի կորուստ եւ զիջման խոսակցությունն ուղղապես բերելու է նոր խնդիրների, նոր մարտահրավերների»:

Խանումյանը նշել է՝ վստահաբար՝ Ադրբեյջանը որեւէ զիջումով չի բավարարվի: Ադրբեյջանը ուզում է ամեն ինչ. նա ամբողջ Արցախով չի բավարարվելու: Դա փաստ է և հայտարարվում է ամենաբարձր մակարդակով, և իրենց հասարակությանն էլ անընդհատ տարիներ շարունակ պատրաստում են դրան:

Նա նշեց, որ հայ հասարակությունն ավելի անզիջում է դարձել, և դա պայմանավորված է մեծապես Ադրբեյջանի ավելի ագրեսիվ վարքագծով: Այս օրերին մենք մեր մաշկի վրա զգացինք, թե ինչ կնշանակի որեւէ տարածքի կորուստ: Մենք տեսանք, որ ադրբեյջանական բանակը որեւէ տարբերություն չի դնում երեխաների, ծերերի, քաղաքացիական բնակչության միջև: Պետք է հասկանալ, որ ամեն մի սանտիմետրի կորուստ բերելու է նոր նմանատիպ կորուստների, ամեն սանտիմետրի կորուստ մեզ ավելի է հեռացնելու մեր հայրենիքից:

«Թե արդյո՞ք մենք պատրաստ ենք այս մարտահրավերներին դիմակայելու՝ պետք է երեսն առաջիկա քայլերից. արդյո՞ք մեր իշխանությունները կզգան համապատասխան գեներալները գնելու, որն անհրաժեշտ է վերջին գարգացումների կրկնությունը թույլ չտալու համար, արդյո՞ք կկազմակերպեն բանակը և ի հայտ եկած թերությունները կվերացնեն, և արդյո՞ք ուժ կգտնեն գնալ արդյունավետ պետության կառուցման, կոռուպցիայի մենաշնորհների և այլնի վերացման: Մենք պետք է աշխատենք զուտ Արցախի խնդիրը լուծելու ուղղությամբ մեր օգտին, իսկ մեր օգտին խնդրի լուծումը նշանակում է՝ ուժեղացնել բանակը, պատրաստ լինել մշտական մարտահրավերներ դիմակայելու և աշխատել Արցախի ճանաչման ուղղությամբ»:

Հարցազրույցը՝ Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԻ

Արցախի պատգամավորները Յերմինե Նաղդայանի՝ «մենք այդ հողերը չենք ուզում» արտահայտության շուրջ

ԼՂՀ ԱԺ պատգամավորներն անդրադարձել են ապրիլի 26-ին ՀՀ ԱԺ փոխնախագահ Յերմինե Նաղդայանի՝ լրագրողների հետ ունեցած ճեպագրույցին, որի ժամանակ վերջինս կարծիք է հայտնել, թե ՀՀ-ն Ղարաբաղի հարցում պատրաստ է տարածքային փոխզիջման:

Նա մասնավորապես նշել էր. «Մեր փոխզիջումը ոչ թե 5 գրավյալ տարածքներն են, այլ այդ համալիրն ամբողջական Մարդիության սկզբունքների, որտեղ մենք ներկայանում ենք՝ որպես մեր խաղաղ, ինքնիշխան պետության համար պայքարող ժողովուրդ, մենք չենք պայքարում ձեր հողերի համար, մենք պայքարում ենք մեր խաղաղ ինքնիշխան պետության համար: Դրա համար մենք ընդունում ենք, որ երբ որ կընդունվի, կլինի հանրաքվեն, կընդունվի կարգավիճակի մասին որոշում եւ աշխարհը կընդունի Ղարաբաղի անկախությունը, մենք ձեր հողերը կամ այն հողերը, որոնց վրա մենք այսօր այդ իրավունքը չունենք, մենք այդ հողերը չենք ուզում: Սա մեր բուժքրային գոնան է եւ սա մեր անվտանգության երաշխիքն է»:

Հարցի շուրջ «Ապառաժ»-ը գրուցել է ԼՂՀ ԱԺ տարբեր խմբակցությունների պատգամավորների հետ:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը նման հայտարարությունն անընդունելի է համարում:

«Այն տեսակետները, որոնք Յերմինե



Նաղդայանը փորձեց մատուցել ոչ միայն հայ հանրությանը, այլեւ Ղարաբաղի հիմնահարցով շահագրգիռ եւ ոչ շահագրգիռ կողմերին. իսկը աղբյուրները նշում են, որ հարցը նաեւ պետք է դիտարկել համահայկական շահերի տիրույթում:

Մտահոգություն կա, որ ՀՀ քաղաքական շրջանակներում ուրվագծվում է գիշողական կամ պարտվողական դիրքորոշում, որը փորձում են մատուցել հայ հասարակությանը»:

Դավիթ Իշխանյանը շեշտել է, որ Արցախի սահմանադրությամբ ամրագրված տարածքները սակարկման առարկա չեն կարող: Պատգամավորը նշել է, որ հարցը նաեւ պետք է դիտարկել համահայկական շահերի տիրույթում:

«Այդ տարածքները, որոնց մասին «համոզված» խոսում է տիկին Նաղդայանը, մեր ազգային անվտանգության բաղադրիչներն են: Նման տեսակետ է

համոզմունք ունեցող անձը չի կարող զբաղեցնել ՀՀ ԱԺ փոխնախագահի պաշտոնը: Նման անձը չի կարող ղեկավարել ԵԽՏՎ-ում հայկական պատվիրակությունը: Ես ամոթ եմ զգում, ամոթ՝ նման պաշտոնյաներ ունենալու համար: Դրանից հետեւություններ պետք է անի ՀՀ բարձրագույն ղեկավարությունը», - ընդգծել է Դավիթ Իշխանյանը:

ԼՂՀ ԱԺ արտաքին հարբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ, «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ Արզիկ Մխիթարյանը նշել է.

«Եթե նա կարող էր այդքան անլուրջ



գտնվել է նման հայտարարություն անել, ապա դա արտակարգ մտահոգիչ է: Ես ինձ թույլ եմ տալիս արտահայտվելու, որ Նաղդայանը չէր կարող այդքան մանկամիտ լինել եւ նման միտք արտահայտել: Կա՛մ դա մշակված քաղաքականություն է, որը մինչեւ հիմա մեզ հայտնի չէ /ինչը շատ վտանգավոր է/, կա՛մ էլ՝ մանկամտություն: Նա պետք է խիզախություն ունենա՝ հայցելու մեր ժողովրդի ներողամտությունը: Նման հայտարարությունը, իրոք, ապակողմնորոշում է մեր հասարակությանը եւ անկայուն իրավիճակ է ստեղծում:

Անձամբ ճանաչելով Յերմինե Նաղդայանին՝ միշտ այն կարծիքն էի, որ նա մեր խնդրի արդարացի լուծման ջատագովներից է, եւ եւրբեւէ չէի մտածում, որ կարող է նման խոսքեր իրեն թույլ տալ»:

Արզիկ Մխիթարյանի խոսքով՝ այսօր Յերմինե Նաղդայանը գանգել է ԼՂՀ ԱԺ ասելով, որ նման հայտարարություն չի արել, եւ դա լրագրողական սխալ տղազրության պատճառ է:

«Պետք է ճշտել՝ դա թյուրիմացություն է, թե՛ նա հենց այդ գաղափարների տերն է: Եթե տիկին Նաղդայանը նման գաղափարների տեր է, ապա պետք է շատ լուրջ վերաբերել երեւույթին եւ լրջորեն դնել այդ հարցը: Իսկ եթե թյուրիմացություն է կամ լրագրողական ինչ-որ սխալ տղազրությունների արդյունք, ապա եւս մեկ անգամ անհրաժեշտ է հստակեցնել նրա կարծիքը Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերյալ, այլապես մենք իրավունք չունենք նման քաղաքական գործչին վստահել Արցախի հիմնախնդրի լուծման առաքելությունը, քանզի նա նույն հաջողությամբ նման թյուրիմացություն թույլ կտա նաեւ ԵԽՏՎ-ում»:

ԼՂՀ ԱԺ «Շարժում-88» խմբակցու-

թյան ղեկավար Էդուարդ Աղաբեկյանը, խոսելով հարցի շուրջ, շեշտել է.

«Նաղդայանի կարծիքն ինձ չի հետաքրքրում: Նա իր կարծիքը կարող է արտահայտել միայն իր ամուսնու մոտ:



Այդպես էլ հրապարակեք կարծիքս: Ո՛չ Նաղդայանը, ո՛չ ՀՀ նախագահը չեն կարող որոշել՝ Ղարաբաղը պե՛տք է արդյոք բան տա, թե՛ ոչ: Գուցե մինչեւ ապրիլի 1-ը կարող էին, ապրիլի 1-ից իրադրություն է փոխվել: ՀՀ-ի գիշողական դիրքերն են պատճառը, որ այսօր Աղբյուրները Հայաստան անվանում է արեւմտյան Աղբյուրներ: Յերմինե Նաղդայանը թող դրան պատասխան տա»:

«Վերածնունդ» խմբակցության պատգամավոր Հայկ Խանումյանն էլ ասել է.

«Պետք է նկատել, որ ԱԺ փոխնախագահի կողմից արված հայտարարություններն ամբողջովին պարտվողական եւ գիշողական են, ինչը ոչ միայն վիրավորում է Արցախի ժողովրդի արժանապատվությունը եւ լկտիացնում Աղբյուրներին, այլեւ զգալի թուլացնում է Յերմինե Նաղդայանի կուսակցի դիրքը բանակցություններում: Երբ որ այդ նույն կուսակցության ներկայացուցիչը՝ ՀՀ նախագահը, գնում է բանակցությունների եւ իր կուսակցության բավականին բարձրաստիճան դեմքը՝ ԱԺ փոխնախագահը, հայտարարում է, որ պատրաստ են տարածքներ զիջել, պատկերացնո՛ւմ



եք այդ բանակցություններ վարողի դիրքը բանակցային սեղանի շուրջ, կամ էլ Աղբյուրների դիրքը, որն արդեն իսկ գիտի, որ Սերժ Սարգսյանի կուսակցության պատասխանատու դեմքերից մեկը պատրաստ է գիշումներ անել Արցախի սահմանադրությամբ ամրագրված շրջանների շուրջ: Ինչպե՛ս կպահի իրեն

Աղբյուրները: Բնականաբար՝ ավելի լկտի:

Մյուս կողմից՝ ամբողջովին անբարոյականություն է, երբ գիտնորը կանգնած է սահմանին եւ կյանքի գնով պահում է դիրքը, նմանատիպ հայտարարություններ անել: Կրկնակի անբարոյականություն է այդ շրջաններում ապրող բնակիչների տեսանկյունից, որովհետեւ մարդիկ այնտեղ ապրում են, այնտեղ աշխատում եւ արարում, իսկ ինչ-որ մի պաշտոնյա հայտարարում է իրենց հողերը կամ իրենց տները հանձնելու մասին:

Ավելին՝ վտանգավոր է նաեւ նրանով, որ լուրջ հարվածներ է հասցնում այդ շրջաններում նախատեսվող ներդրումային ծրագրերի համար»:

Խանումյանը եւս մտահոգություն է հայտնել Նաղդայանի՝ Հայաստանի պատվիրակությունը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում գլխավորելու համար: Մի վայր, որտեղ Աղբյուրները բավականին ակտիվ փորձում է տարբեր բանաձեւեր ընդունել տալ:

«Յետեւաբար, մի լուծում կա՝ Հ. Նաղդայանը պետք է հրաժարական տա ՀՀ ԱԺ նախագահի տեղակալի պաշտոնից եւ պետք է նաեւ հրաժարվի ԵԽՏՎ պատվիրակությունում ՀՀ ներկայացուցչի պաշտոնից», - եզրափակել է Հ. Խանումյանը:

«Ժողովրդավարություն» խմբակցության ղեկավար Վարդգես Բաղդասյանն էլ մեզ հետ զրույցում ասել է.

«Ես միանշանակ այն կարծիքին եմ, որ ոչ մեկը չի կարող կասկածի տակ դնել ԼՂՀ սահմանադրությունը, իսկ այն տարածքները, որոնց մասին խոսվել է ճեպագրույցի ժամանակ, մեր հանրապետության սահմանադրորեն անբաժանելի մասն են: Խոսել տարածքներ զիջելու մասին՝ ոչ միայն ժամանակավրեպ է, այլեւ, իմ խորին համոզմամբ, ուղղակի անթույլատրելի: Ես չեմ բացառում նաեւ, որ ինչ որ բան այնպես չի ասվել կամ կոնտեքստից խոսք է դուրս մնացել, սակայն այն, ինչը տեսել եմ տեսագրության ձեւով, անընդունելի է: Եթե տիկին Նաղդայանը կարծում է, որ իր խոսքերը կոնտեքստից դուրս են հրապարակվել, այդ իսկ պատճառով չեն ընկալվել, ապա նա հնարավորություն ունի հրապարակավ ճշտում մտցնելու այդ հարցում»:



Հարցազրույցը վարեց Արմինե ՆԱԻԻՅԱՆԸ

Վերադարձ անցյալին չի լինելու. Բակո Սահակյան



Ադրբեջանական լայնամասշտաբ ագրեսիայի նախաձեռնման հետևանքով ստեղծված իրավիճակի, բանակցային գործընթացի դատապարտվածության, տարածքային ամբողջականության սկզբունքի տրամաբանության եւ հարակից այլ հարցերի շուրջ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հարցազրույց է տվել Արցախի հանրային հեռուստատեսությանն ու Արցախթայմս կայքին:

Առանց Արցախի Հանրապետության մասնակցության Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումն անհնարին է՝ ասել է Արցախի Հանրապետության

նախագահը:

«Զկա մի հավանական զարգացում, որ խնդիրը լուծում կստանա առանց մեր մասնակցության: Այդպիսի բան չի լինելու: Իհարկե, ունենալով հիմնախնդրի լուծման հետ կապված հստակ մոտեցում՝ միաժամանակ մենք հայտարարել եւ հայտարարում ենք, որ մեզ համար ավելի նախընտրելի է խանգարված ձեւաչափով բանակցությունները, քան՝ պատերազմական գործողությունները: Սակայն դա չի նշանակում, որ մենք հրաժարվում ենք մեր դիրքորոշումից, սկզբունքից, որ հիմնախնդրի լուծման հետ կապված մեր տեսակետը փոփոխության է ենթարկվել: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, փորձելու ենք ազդել, որ հավանական բանակցային գործընթաց սկսելու դեպքում Արցախը լինի այդ բանակցային գործընթացի լիարժեք կողմ: Այս պահի դրությամբ մենք չենք տեսնում այդպիսի հնարավորություն, քանի որ այն, ինչ թույլ է տվել Ադրբեջանը, որտեղ կերպ չի խոսում այն մասին, որ մոտ ապագայում վերադառնալու ենք բանակցային սեղանի շուրջ: Այնուամենայնիվ, միջազգային հանրությունը հնարավորություն է ունեցել այս երկար տարիների ընթացքում համոզվելու, որ հայկական կողմը ցանկանում է, որ հիմնախնդիրը լուծում ստանա բանակցային գործընթացի օգնությամբ»,- նշել է Բակո Սահակյանը:

Արցախի նախագահն անդրադարձել է վերջերս ավելի ակտիվ դարձած քննարկումներին՝ կապված հողերը հանձ-

նելուն՝ նշելով, թե դրանք բացարձակապես անհիմն են:

«Ես տեղյակ եմ այդ քննարկումներին ու մեկնաբանություններին եւ կցանկանայի, որ մենք դադարեցնենք անհիմն քննարկումները: Դրանք չեն նպաստում մեր առաջադրանքի կատարմանը: Անհրաժեշտություն կա կտրուկ դադարեցնելու այդ գնահատականները, քանի որ դրանք չեն նպաստում մեր աշխատանքին: Այս տարիներին մեր կողմից բազմիցս հայտարարվել է, որ վերադարձ անցյալին չի լինելու, այդ թվում է՝ հողերի հետ կապված: Մենք նաեւ հնարավորություն ենք ունեցել մեր տեսակետը ներկայացնելու քաղաքացիներին՝ նշելով, որ ներկայիս վիճակի, հողերի հետ կապված լիազորությունները վերապահված են միայն ու միայն ժողովրդին: Անհրաժեշտ է դադարեցնել հակասություններ փնտրել Հայաստանի եւ Արցախի տեսակետների միջեւ, որովհետեւ նման բան չի կարող լինել: Մենք գործ ունենք համագաղափար նշանակության խնդրի հետ եւ չենք կարող ունենալ հակասություններ: Մենք իրականացնում ենք հետեւողական աշխատանք եւ դեռեւս այս պահի դրությամբ չենք ստացել Ադրբեջանի կողմից առաջին եւ հիմնական պատասխանը՝ ընդունում են նրանք մեր անկախությունը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա այն, ինչ քննարկվում է խոսվում է, դրանք առջինն են: Ցանկանում եմ, որ այս իրողությունից եւ ճշմարտությունից կառուցված լինի թե՛ մեր ռազմավարությունը, թե՛ մեր քաղաքականությունը»,-

ընդգծել է Արցախի նախագահը:

Անդրադառնալով ապրիլի սկզբին ադրբեջանական կողմի սանձազերծած գործողությունների հետեւանքներին՝ Բակո Սահակյանը նշել է, որ առավել ցավալի են մեր զինվորների կորուստները, որոնք անդառնալի են:

«Նրանք մեր երեխաներն են, մեր հարազատներն են: Գիտակցված այդ զոհաբերությունն արժեւորելու լավագույն միջոցը մեր երկրի շենագումն է, անվտանգության ապահովումը»,- ասել է նա:

Նախագահը հայտնել է, որ շարունակվում է համագործակցությունը ՀՀ կառավարության, Ազգային ժողովի, կուսակցական եւ համայնքային կազմակերպությունների հետ: Նա հատկապես կարեւորել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցելությունն Արցախ, որի ընթացքում ընդունվել են շատ որոշումներ:

«Պայմանավորվածությունների մի մասն արդեն իրագործվում է: Քանի որ ՀՀ նախագահը քաջ տիրապետում է ռազմաճակատի տարբեր հատվածներին, քանի որ մենք ազատագրել ենք մեր հայրենիքը, երբ նա ղեկավարում էր մեր ռազմական գերատեսչությունը, օգտագործել ենք նրա փորձը անհրաժեշտ շտկումներն իրականացնելու եւ հաջորդ մեր գործողությունները նախանշելու համար»,- հայտնել է Բակո Սահակյանը՝ տեղեկացնելով, որ առաջիկայում հանդիպելու է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ:

«ԱՊՍՈՍԺ»

7 օր առաջնագծում

1 ← ԼՂՀ ՊՆ-ն հրապարակել է նկարներ, որոնցում նշված բոլոր ռազմական օբյեկտները, համաձայն միջազգային սովորության մարդասիրական իրավունքի նորմերի (որոնք, ի թիվս այլոց, արտացոլված են Միջազգային զինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի ժնեւի կոնվենցիայի առաջին արձանագրություն, Յոթնամյա 52-ում), հանդիսանում են լեգիտիմ թիրախներ:

Ադրբեջանի զինված ուժերը, ի խախտումն նույն արձանագրության հոդված 58-րդում արտացոլված միջազգային

սովորության նորմի, չեն խուսափել բնակեցված շրջաններում կամ դրանց մերձակա վայրերում ռազմական օբյեկտներ տեղակայելուց:

Ապրիլի 28-ի լույս 29-ի գիշերը դարբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծի ողջ երկայնքով հակառակորդը շարունակել է խախտել կրակի դադարեցման պայմանավորվածությունը՝ կիրառելով տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, ինչպես նաեւ 60 (19 արկ), 82 (128 արկ), 120 (5 արկ) միլիմետրանոց ականանետեր, ՌԴԳ-7 (2 արկ), ՀՀՆ-9 (2 արկ) ու

ՀԱՆ-17 (27 արկ) տիպի նռնականետեր:

Ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը հակամարտ գործերի շփման գծի ողջ երկայնքով հակառակորդի կողմից դարձյալ շարունակվել է խախտվել կրակի դադարեցման պայմանավորվածությունը՝ հրաձգային զինատեսակներից բացի օգտագործելով նաեւ 60 եւ 82 միլիմետրանոց ականանետեր ու տարբեր տիպի նռնականետեր:

Ադրբեջանական զինուժի կողմից կրակի դադարեցման պայմանավորվածության խախտման արդյունքում հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ մահացու

վիրավորում են ստացել ՊԲ զինծառայողներ Գարիկ Մնացականի Մովսիսյանը (ծնվ. 1997թ.) եւ Վազգեն Հենրիկի Հարությունյանը (ծնվ. 1968թ.)...

Հակառակորդը ոչ միայն իր սադրիչ գործողություններով շարունակում է իր թիռակոծել դարբաղյան խաղաղ բնակավայրերը, այլեւ, սովորության համաձայն, փորձում է իրադարձությունները գլխավոր ներկայացնելով՝ դարբաղյան կողմի մեղադրել իրենց բնակավայրերին հարվածներ հասցնելու մեջ:

ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայություն

Ամեն գնով Սփյուռք-Արցախ-Հայաստան համախմբումը պետք է պահենք. Պետո Դեմիրճյան

ՀՀԴ Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբի հաղորդակցության պատասխանատու Պետո Դեմիրճյանը լրագրողների հետ զրույցում, անդրադառնալով ապրիլի սկզբին դարբաղա-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած ռազմական գործողություններին եւ հաջորդող իրադարձություններին, ասել է. «Հատկապես ապրիլյան չորսօրյա գործողությունները ցույց տվեցին, որ եթե որեւէ մեկի մոտ տարակուսանք կար, որ Ադրբեջանն ու Թուրքիան միասին են գործում հայերի դեմ, ապա հիմա որեւէ կասկած չկա: Սա երեւան եկավ նաեւ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթից, եւ այս առումով մենք՝ Հայ Դատի աշխատակիցներս, հաստատում ենք, որ այդպես է եւ պետք է պայքարենք այս երկու երկրների դեմ: Շատ հաճախ Ադրբեջանը Թուրքիայից ավելի թուրք է՝ Ցեղասպանության ժխտման առումով: Հայերի դեմ աշխատանքները կամ պայքարը ապացուցվեց նաեւ ԵԽԽԿ-ում»:

«Թալիշում տեղի ունեցած դեպքերը,

երեք ծեղուկների նկարները, որոնք մենք տեսանք խոշտանգված, վկայում են այն մասին, որ եթե այնտեղ լինեին ավելի երիտասարդ մարդիկ, ավելի գազանաբարկվարվեին նրանց հետ: Եթե նրանք այդ տարիքի մարդկանց են խոշտանգել, ապա արդեն պատկերացրեք, թե ինչպես կարող են վարվել մեր՝ գերի ընկած եւ, առհասարակ, զինվորների հետ: Այսինքն՝ որեւէ կասկած չկա, որ այս մարդիկ արյունարբու ճամփա են ելել, իսկ նման պահվածքը չպետք է թույլատրել,- ասել է Պ.Դեմիրճյանը եւ հավելել,- պատշաճ արձագանք չեղավ: Մենք սպասում էինք, որ միջազգային հանրությունը, հատկապես՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որն անմիջական պատասխանատվություն ունի, պատշաճ ձեւով կարձագանքի դեպքերին, սակայն չեղավ: Կրկին հավասարակշռությունը պահեց, հավասարության նշան դրեց: Ամեն բան պետք էր ճիշտ ձեւով ասել:

Այս անգամ պետք է նշել, որ Եվրախորհրդարանի նիստում ավելի հայկա-

կան կամ ավելի հայամետ դիրքորոշումներ տեղի ունեցան, քան ադրբեջանամետ:

Եթե հայ իշխանությունը, մարդը, զինվորը միացյալ ձեւով չգիմարեն, ամեն ինչ կկորչի: Մենք ամեն գնով Սփյուռք-Արցախ-Հայաստան համախմբումը պետք է պահենք: Համախմբվածությունը պահպանելը շատ կարեւոր է»:

Երրորդանի՝ Պոլստ պատրիարք Արամ Աթեյանին ուղղված ապրիլյան չորսօրյան ուղերձի մասին խոսելով՝ Դեմիրճյանը նշել է. «Պետք է ընդունել, որ մի փոքր առաջադիմություն կա. հիմա ասում են, որ Անատոլիայում հայեր են եղել, այսինքն՝ կատակերգություն կամ մտքի զարգացում կա, բայց, ամեն պարագայում, երրորդ անգամ է, որ այսպիսի պատգամ է մեջտեղ գալիս: Առաջին անգամ Երրորդանը, երբ վարչապետ էր, հետո՝ Դավթթյուն, եւ այս տարի կրկին Երրորդան է, որ ուղերձ է հղում Պոլստ պատրիարք Արամ Աթեյանին: Այս անգամ էլ զո-

հին ու դահճին են հավասարեցնում: Սա ժխտողականության նոր ձեւ է, ինչ-որ թղթով փաթաթված նոր փաթեթ, որին մենք ոչ հավատում ենք, ոչ էլ խաբվում: Դեռեւս երեկ եւ այսօր Երրորդան աջ ու ձախ հայիցում էր եւ ասում, որ Ցեղասպանություն չկա»:

Անդրադառնալով Արցախում ռազմական գործողությունների հնարավոր վերսկսմանը՝ Դեմիրճյանը նշել է. «Հավանաբար, այո, կվերսկսվեն գործողությունները, որովհետեւ պետք չէ մոռանալ, որ պատերազմը չի վերջացել: Չինադադար չի նշանակում, որ պատերազմի ավարտ է: Նրանք կարող են վերանայել մոտեցումները, որպեսզի սկզբնական թիրախին հասնեն: ՀՀ ՊՆ-ն էլ ասում է, որ նրանց թիրախն էր Մարտակերտը եւ այլն: Ամենայն հավանականությամբ՝ ռազմական գործողությունները կվերսկսվեն, բայց թե ե՞րբ, դժվար է ասել: Պետք է շատ զգույն լինել»:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Երբ լռեն թնդանոթները...

Ապրիլյան իրադարձությունները, հիրավի, կարելի է անվանել Արցախյան երկրորդ պատերազմ: Ադրբեջանի կողմից սանձազերծած ագրեսիան, որը վերածվեց լայնամասշտաբ պատերազմի ԼՂՀ սահմանի ողջ երկայնքով, մեկ անգամ եւս ստիպեց աշխարհի մեծ թվով երկրների և կազմակերպությունների ուշադրությունը սեւեռել Անդրկովկասում շուրջ երեք տասնամյակ տեւող մերթ սառը, մերթ թեժ հակամարտությանը: Այս անգամ եւս հնչող գնահատականները տարաբնույթ էին:

Տասնամյակներ տեւող այս հակամարտությունը գնալով վեր է ածվում ավելի բարդ և խճճված պատկերի, որն այսօր պատճառ է դարձել հայկական քաղաքական և դիվանագիտական մտքի պառակտման ու հակամարտության կարգավորման միասնական տեսլականի բացակայության: Սա անթույլատրելի է հաղթանակած ու իրադարձար պարտադրած կողմի համար:

Որեւէ բան պետք է բարդացնել եւ, առավել եւս, ընկնել մանրուքների հետեւից: Արեւի տակ ազատ եւ անկախ ապրելու համար որեւէ մեկը պարտավոր է արդարանալ որեւէ մեկի առջեւ. սա կարճ և պարզագույն բանաձեւ է, որով պետք է առաջնորդվի հայկական արտաքին և ներքին քաղաքական միտքը:

Արցախի Հանրապետության ծնունդն արտառոց դեպք էր աշխարհում, և պետք է այդ փաստը դիտել տարբեր տեսանկյուններից: Աշխարհում առկա բոլոր պետությունների պես մի օր էլ հռչակվեց մեր պետականությունը, հռչակվեց իր ազգաբնակչության կամարտահայտության հիման վրա, հռչակվեց այս աշխարհում ընդունված նորմերով ու սկզբունքներով, հռչակվեց եւ ստիպված եղավ իր ուսերին վերցնել մեծ մարտահրավերներ: Պայքարեց, մաքառեց և կանխեց իր նմանի կողմից իրեն ուղղված ագրեսիան ու թելադրեց փխրուն խաղաղություն:

Արդեն 25 տարի՝ Արցախի Հանրապետությունը իրոզություն է: Չկա եւ չպետք է լինի հակամարտություն: Կա խնդիր և սպառնալիք. հարեւան Ադրբեջանի Հանրապետությունը սպառնում է եւ հստակ գործողություններով փորձում է ոչնչացնել ամբողջական մի երկիր և նրա բնակչությանը, միջազգային ընդունված և հռչակված բառապաշարով ասել է թե՛՝ ցեղասպանություն է իրագործում: Այս դեպքում ի՞նչ ասել է հակամարտություն և բանակցություն: Ինչի՞ շուրջ և ո՞ւմ հետ պետք է բանակցել. սա է ամբողջ հարցը:

Իհարկե, մեծ հպարտությամբ և երախտագիտությամբ պետք է արձանագրել կարեւոր փաստը՝ հայկական բանակը կանխում է թշնամու ցանկացած ոտնձգություն և երաշխավորում Արցախի բնակչության անվտանգությունը:

Սակայն չլուծված է մնում հիմնական խնդիրը: Մինչև է՞րբ պիտի շարունակվի այսպես և ինչպե՞ս պիտի լուծվի հայ ժողովրդի խաղաղ ապրելու իրավունքը:

Պետք է հստակ կոչով դիմել համայն աշխարհին՝ ընդունել և ճանաչել մեզ համաշխարհային ընտանիքի մեջ՝ որպես նույն տեսակ, որը վտանգված է:

Այլևս բավական է: Մեր ազատ և լիիրավ ապրելու իրավունքը չպետք է խաղաղաբարտ դարձնել: 25 տարի տեւող խեղաթյուրված քաղաքականությունն իրենց կյանքով սրբագրել են անկախության սերնդի մարտիկները: Այսպես այլևս անթույլատրելի է: Սա ո՛չ ազատագրական, ո՛չ էլ հայրենական պատերազմ է: Սա ապրելու իրավունքի պատերազմ է, որը կարելի էր եւ շրջանցել: Մեր ժողովրդի համար մեծ ճոխություն է՝ ամեն հարց լուծել մարդկային կյանքով:

Ժողովուրդն անհամբեր սպասում է՝ ի՞նչ է լինելու, երբ լռեն թնդանոթները...



7 օր առաջնագծում

Ադրբեջանական պրոպագանդան, հենվելով սեփական երկրի պաշտպանական գերատեսչության աղբյուրի վրա, հաղորդագրություն էր տարածել, թե իբր ապրիլի 24-ի գիշերը հայկական «տանկերը մոտեցել են դիրքերին և կրակ բացել, իսկ այնուհետև կենդանի ուժի օգնությամբ կատարել հարձակման փորձ»: ԼՂՀ ՊՆ-ն հերքել է այս լուրը՝ այն որակելով «հակառակորդի քարոզչական մուղամի հերթական ելուեջ»:

Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ադրբեջանա-դարաբադյան զինված դիմակայության գոտում հակառակորդը կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունը խախտել է ավելի քան 120 անգամ՝ օգտագործելով տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, 60 (3 արկ), 82 (4 արկ) միլիմետրանոց ականանետեր, ՀԱՆ-17 տիպի նռնականետ (57 արկ) և ՁՈւ-23-2 տիպի զենիթային կայանք (11 կրակոց): Ծփման գծի հյուսիսարևելյան (Մարտակերտ) ուղղությամբ հակառակորդը հերթական անգամ անարդյունավետ կիրառել է նաև SPIKE տիպի հակատանկային կառավարվող հրթիռ (1 հատ):

Ապրիլի 25-ին և լույս 26-ի գիշերը ադրբեջանա-դարաբադյան զինված դիմակայության գոտում հակառակորդը կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունը խախտել է ավելի քան 80 անգամ՝ օգտագործելով իր զինանոցում գտնվող գրեթե բոլոր տիպի հրետանային միջոցները և գրահատելիական, մասնավորապես՝ 60 (26 արկ), 82 (75 արկ) միլիմետրանոց ականանետեր, ՌՊԳ-7 (7 արկ), ՀՀՆ-9 (2 արկ) ու ՀԱՆ-17 տիպի նռնականետ (3 արկ), ՁՈւ-23-

2 տիպի զենիթային կայանք (200 կրակոց), TR-107 տիպի ռեակտիվ հրթիռային կայանք և տանկ: Բացի մարտական հեծակետերից, ՄՄ-21 (Գրադ) կայանքից արկակոծման է ենթարկել Մարտակերտ բնակավայրը (14 արկ): Հրետանային կրակ է վարվել նաև Մատաղիսի ուղղությամբ (8 արկ):

Հակառակորդի կողմից կրակի դադարեցման պայմանավորվածությունների խախտման արդյունքում մահացու վիրավորումներ են ստացել ՊԲ պայմանագրային զինծառայողներ Տիգրան Մխիթարի Պողոսյանը (ծնվ. 1992թ.) և Արամ Նիկոլայի Առուշանյանը (ծնվ. 1972թ.):

Ապրիլի 26-ին, օրվա ընթացքում թշնամին շարունակել է ինտենսիվ հրետակոծության ենթարկել ինչպես ողջ առաջնագիծը, այնպես էլ խաղաղ բնակավայրերը՝ կիրառելով տարբեր տրամաչափի ականանետեր, 85, 100, 122 ու 152 միլիմետրանոց թնդանոթներ, ՄՄ-21 (Գրադ) կայանքներ և 9Մ33 Մ3 տիպի զենիթահրթիռային համալիր: Ադրբեջանական զինուժը իր տրամադրության տակ եղած գրեթե բոլոր հրետանային զինատեսակներից, այդ թվում՝ ականանետերից, թնդանոթներից ու ՄՄ-21 (Գրադ) կայանքներից դարաբադյան դիրքերի և խաղաղ բնակավայրերի վրա արձակել է ավելի քան 550 արկ: Առավել ինտենսիվ հրետակոծություններ են արձանագրվել շփման գծի հյուսիսարևելյան ուղղությամբ: Հրետակոծության են ենթարկվել Մարտակերտ, Ներքին Հոռաթաղ և այլ խաղաղ բնակավայրեր:

Հակառակորդի կողմից ձեռնարկված ագրեսիվ գործողությունների

հետեւանքով մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1996թ. ծնված Հայկ Սամվելի Մինասյանը:

Ապրիլի 27-ին, ողջ օրվա ընթացքում դարաբադա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում հաստատված հարաբերական անդորրը ժամը 17:40-ի սահմաններում խախտվել է ադրբեջանական ՁՈՒ-ի կողմից: Ադրբեջանական զինուժը 82 միլիմետրանոց ականանետերից սկսել է արկակոծել Մարտակերտի ուղղությամբ տեղակայված պաշտպանության բանակի մարտական դիրքերը (14 արկ):

Ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը շփման գծի ողջ երկայնքով տանկերի, տարբեր տրամաչափի ականանետերի, թնդանոթների, TR-107 տիպի ռեակտիվ հրթիռահրետանային համակարգերի ու ՄՄ-21 (Գրադ) կայանքների կիրառմամբ շարունակվել են ինտենսիվ հրետակոծության ենթարկվել ՊԲ մարտական դիրքերը, արձակվել է ավելի քան 240 արկ: Առավել ինտենսիվ հրետակոծություններ են արձանագրվել շփման գծի արևելյան, հյուսիսային և հյուսիսարևելյան ուղղություններով: ՄՄ-21 (Գրադ) կայանքներից հրետակոծության է ենթարկվել Մատաղիս խաղաղ բնակավայրը:

Ապրիլի 28-ի օրվա ընթացքում պահպանված կրակի դադարեցման պայմանավորվածությունը հակառակորդը խախտել է ժամը 20:00-ի սահմաններում:

Ադրբեջանական զինուժը 60, 82 և 120 միլիմետրանոց ականանետերից վերսկսել է հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված՝ պաշտպանության բանակի մարտական դիրքերի արկակոծումը: